



**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ**

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ 22(386) «13» նոյեմբերի 2019թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	ՅՈԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ	
	ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ	
491	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 899-Ն որոշումը	
492	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 908-Ն որոշումը	
493	«Արցախի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 28-ի N 1135-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 910-Ն որոշումը	
494	«Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի մարտի 14-ի N 160-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 913-Ն որոշումը	
	ԻՆՆԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ	
	ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ	
495	«Սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման և էլեկտրական էներգիայի մատակարարման, էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրերի օրինակելի ձևերը սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի N 57-Ն որոշումը	
	ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ	
	ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ, ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐԸ	
496	«Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարի 2019 թվականի ապրիլի	

	12-ի N 2-Ն և Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի 2019 թվականի ապրիլի 12-ի N 89-Ն համատեղ հրամանում փոփոխություն կատարելու մասին» ԱՀ աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարի N7-Ն և ԱՀ գյուղատնտեսության նախարարի N276-Ն համատեղ հրամանը	
497	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2015 թվականի փետրվարի 5-ի N1-Ն հրամանում լրացում և փոփոխություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2017 թվականի մայիսի 15-ի N 3-Ն հրամանում լրացումներ և Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարի 2019 թվականի ապրիլի 12-ի N 3-Ն հրամանում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ԱՀ աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարի N 8-Ն հրամանը	
498	«Դենտալ-Ֆարմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության լիցենզիայի գործունեության վայրի փոփոխման մասին» ԱՀ առողջապահության նախարարի N 300-Ա հրամանը	
499	«Դենտալ-Ֆարմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության լիցենզիայի գործունեության վայրի փոփոխման մասին» ԱՀ առողջապահության նախարարի N 304-Ա հրամանը	
500	«ԱրգիԱրտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզիա տալու մասին» ԱՀ բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարի N 182-Ա հրամանը	
501	«Արցախի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկատվության «Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչը» կիրառման մեջ դնելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսական զարգացման նախարարության 2008 թվականի հուլիսի 3-ի N 1-2/80-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարի N10-Ն հրամանը	
502	«Արցախի Հանրապետությունում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության լիցենզիա և լիցենզիայի ներդիրներ տրամադրելու և դրանց գործողությունները դադարեցնելու մասին» ԱՀ էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարի N 207 հրամանը	
503	«Արցախի Հանրապետության երաժշտական և արվեստի դպրոցների 2019-2020 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները հաստատելու մասին» ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարի N 337-Ն հրամանը	
ՏԱՄՆԵՐՔԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ		

	ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ	
504	ԱՀ Գերագույն դատարանի քրեական գործ ԸԻԴ /0007/01/19 որոշումը	

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

1 նոյեմբերի 2019թ.

N 899-Ն

ք. Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՑԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ա ղ ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի վարչական սահմաններում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող, հատուկ պահպանվող նպատակային նշանակության 4,5625 հեկտար հանգստի համար նախատեսված հողերը, համաձայն հավելվածի, փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ հասարակական կառուցապատման հողերի:

2. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

4 նոյեմբերի 2019թ.

N 908-Ն

ք. Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **առաջում է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 21-ի N 654 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի Սպիտակաշեն գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում, համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,02 հեկտար արոտավայրը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

4 նոյեմբերի 2019թ.

N 910-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ
ՎԵՐԱԲԱՇՇՈՒՄ, ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 1135-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Արցախի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. «Արցախի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի N 1 հավելվածի NN 1, 3.2, 3.3 և 3.5 աղյուսակներում կատարել վերաբաշխում և Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 28-ի «Արցախի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1135-Ն որոշման N 2 հավելվածի NN 1, 3.2, 3.3 և 3.5 աղյուսակների ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

**«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՄԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 1135-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՄԱԿԻ
ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար ՀՀ դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
			ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱՌՄԵՐ	-	-	-	-
			այդ թվում՝	-	-	-	-
08			ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ	-	-	-	30 000,0
	1		Հանգստի և սպորտի ծառայություններ	-	-	-	30 000,0
		1	Հանգստի և սպորտի ծառայություններ	-	-	-	30 000,0
		02	Մարզական միջոցառումներ	-	-	-	30 000,0
09			ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	-	-	-	(30 000,0)
	1		Նախադպրոցական կրթություն				(17 660,0)
		1	Նախադպրոցական կրթություն				(17 660,0)
		03	Նախադպրոցական հիմնարկներ				(17 660,0)
			ԱՀ կառավարություն				(17 660,0)
	2		Տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթություն	-	-	-	(23 424,6)
		1	Տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթություն	-	-	-	(23 424,6)
		01	Պետական աջակցություն ԱՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություններին				18 577,0
			Ստեփանակերտի քաղաքապետարան				17 660,0
			Շահումյանի շրջանի վարչակազմ				917,0
		03	Պետական աջակցություն ԱՀ շրջանների պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենություններին	-	-	-	(42 001,6)

			Հաղորդի շրջանի վարչակազմ				(400,8)
			Մարտակերտի շրջանի վարչակազմ	-	-	-	(15 683,8)
			Շահումյանի շրջանի վարչակազմ				(917,0)
			Քաշաթաղի շրջանի վարչակազմ	-	-	-	(25 000,0)
5			Ըստ մակարդակների չդասակարգվող կրթություն	-	-	-	400,8
		1	Արտադպրոցական դաստիարակություն	-	-	-	400,8
		01	Պետական աջակցություն մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններին	-	-	-	400,8
			Հաղորդի շրջանի վարչակազմ	-	-	-	400,8
6			Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ	-	-	-	10 683,8
		1	Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ	-	-	-	10 683,8
		06	Դասագրքերի, ուսումնամեթոդական, ուսումնաօժանդակ գրականության, նյութերի, մասնագիտական գրականության ձեռքբերում	-	-	-	8 983,8
			ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարություն	-	-	-	8 983,8
		14	Կենտրոնացված կարգով կրթական և մարզական հաստատությունների համար գույքի ձեռքբերում և տեղափոխում	-	-	-	1 700,0
			ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարություն	-	-	-	1 700,0

**«ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 3.2 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ
ԵՎ ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 1135-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 3.2 ԱՂՅՈՒՍԱԿԻ
ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար ՀՀ դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Ծրագրերի և կատարողների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Իննամիս	Տարի
09	2	1	Ստեփանակերտի քաղաքապետարան				17 660,0
			«Ստեփանակերտի Մ. Մաշտոցի անվան N 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ				5 100,5
			«Ստեփանակերտի N 6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	-	-	-	4 913,4
			«Ստեփանակերտի Ա. Սախարովի անվան N 8 միջնակարգ հոսքային դպրոց» ՊՈԱԿ	-	-	-	7 646,1
			Շահումյանի շրջանի վարչակազմ				917,0
			«Քարվաճառի Վ. Սարոյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ				917,0
			ԸՆԴԱՄԵՆԸ	-	-	-	18 577,0

**«ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 3.3 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ
ԵՎ ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 1135-Ն ՈՐՈՇՄԱՆ N2 ՀԱՎԵԼՎԱԾԻ N3.3 ԱՂՅՈՒՍԱԿԻ
ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար ՀՀ դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Ծրագրերի և կատարողների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Իննամիս	Տարի
9	2	1	Հաղրութի շրջանի վարչակազմ				(400,8)
			«Հաղրութի շրջանի հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենություն» ՊՈԱԿ				(400,8)
			Մարտակերտի շրջանի վարչակազմ	-	-	-	(15 683,8)
			«Մարտակերտի շրջանի հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենություն» ՊՈԱԿ	-	-	-	(15 683,8)
			Շահումյանի շրջանի վարչակազմ				(917,0)

			«Շահումյանի շրջանի հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենություն» ՊՈԱԿ				(917.0)
			Քաշաթաղի շրջանի վարչակազմ	-	-	-	(25 000,0)
			«Քաշաթաղի շրջանի հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենություն» ՊՈԱԿ	-	-	-	(25 000,0)
			ԸՆԴԱՄԵՆԸ	-	-	-	(42,001.6)

Աղյուսակ N 4

**«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 3.5 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ
ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 1135-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 3.5 ԱՂՅՈՒՍԱԿԻ
ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար ՀՀ դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Ծրագրերի և կատարողների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Իննամիս	Տարի
09	5	1	Հաղորդի շրջանի վարչակազմ				400,8
			«Հաղորդի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն» ՊՈԱԿ				400,8
			ԸՆԴԱՄԵՆԸ	-	-	-	400,8

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

6 նոյեմբերի 2019թ.

N 913-Ն

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՐՏԻ 14-Ի N 160-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի մարտի 14-ի «Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարության «Նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդ» ծրագրի գծով արտաբյուջետային հաշվի միջոցների ծախսման 2019 թվականի նախահաշիվը և գնումների պլանը հաստատելու մասին» N 160-Ն որոշմամբ հաստատված NN 1 և 2 հավելվածների ցուցանիշներում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն N N 1 և 2 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ
 ՄԱՐՏԻ 4-Ի N 160-Ն ՈՐՈՇՄԱՆ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ
 ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄԸ**

(հազար դրամ)

	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	-	-	-	20 000,00
այդ թվում՝				
ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ	-	-	-	9 400,0
այդ թվում՝				
Աշխատանքի վարձատրություն	-	-	-	6 400,0
այդ թվում՝				
Դրամով վճարվող աշխատավարձեր և հավելվածարձեր	-	-	-	6 400,0
-Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	-	-	-	6 400,0
Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	-	-	-	3 000,0
այդ թվում՝				
Ընթացիկ նորոգում և պահպանում (ծառայություններ և նյութեր)	-	-	-	3 000,0
- Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	-	-	-	3 000,0
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՀԵՏ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	-	-	-	10 600,0
այդ թվում՝				
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ	-	-	-	10 600,0
այդ թվում՝				
ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ	-	-	-	10 600,0
այդ թվում՝				
ՄԵՔԵՆԱՆԵՐ ԵՎ ՄԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ	-	-	-	10 600,0
այդ թվում՝				
- Տրանսպորտային սարքավորումներ	-	-	-	10 600,0

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
 ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
 ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՐՏԻ 4-Ի N 160-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ
ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄԸ**

(հազար դրամով)

Կոդը	Անվանումը	Գնման ձևը	Չափման միավորը	Քա- նակը	Ցուցանիշների փոփոխու- թյունը (ավելացումները նշված են դրական նշա- նով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)
Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարության կրթական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդ					13 600,0
4251	Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում				3 000,0
45461100-1	Շենքերի և շինությունների ընթացիկ նորոգման աշխա- տանքներ	ՊԸ	դրամ		3 000,0
5121	Տրանսպորտային սարքավորումներ				10 600,0
34100000-1	Ավտոմեքենաներ	ԲԸԱՀ	դրամ		10 600,0

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«31» հոկտեմբերի 2019 թվականի

N 57-Ն

ք. Ստեփանակերտ

**ՄՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԷԼԵԿՏՐՈՒԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՄԱՆ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՒԿԱՆ
ԷՆԵՐԳԻԱՅԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ, ԷԼԵԿՏՐՈՒԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԵՐԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ
ՂԱՐԱԲԱՎԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԻ
ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՈՒՅԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 12-րդ հոդվածի «ը» կետը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել՝

1) սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման և էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրի օրինակելի ձևը՝ համաձայն հավելված N 1-ի.

2) էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրի օրինակելի ձևը՝ համաձայն հավելված N 2-ի:

2. «Արցախէներգո» փակ բաժնետիրական ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 30-ը վերակնքել բաժանորդների հետ կնքված էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրերը:

3. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի՝

1) 2008 թվականի մայիսի 4-ի «Էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» Թիվ 24Ն որոշումը.

2) 2008 թվականի հոկտեմբերի 18-ի «Էլեկտրական էներգիայի մատակարարման (Մատակարար-Սպառող (բնակիչ)) պայմանագրի օրինակելի ձևը հաստատելու մասին» Թիվ 54Ն որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Մ. ՎԻՐԱԲՅԱՆ

2019 թվականի հոկտեմբերի 31

ք. Ստեփանակերտ

Հավելված N 1
Արցախի Հանրապետության հանրային
ծառայությունները և տնտեսական մրցակցությունը
կարգավորող պետական հանձնաժողովի
2019 թվականի հոկտեմբերի 31-ի N 57-Ն որոշման

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ____

**ՄՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՄԱՆ
ԵՎ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՄԱՍԱԿԱՐԱՐՄԱՆ**

_____ 20__ թվական
(կնքման վայրը)

Մատակարարը _____
(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը)

ի դեմս _____ ,
(անունը, ազգանունը, պաշտոնը, լիազորված լինելու դեպքում լիազորագրի տվյալները)

որը գործում է _____ հիման վրա, մի կողմից, և
(գործունեությունը կարգավորող փաստաթղթի անվանումը)

Սպառողը՝ _____
(անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը, ներկայացուցչի
անունը, ազգանունը, պաշտոնը, լիազորված լինելու դեպքում՝ լիազորագրի տվյալները)

մյուս կողմից, համատեղ կոչվելով Կողմեր, ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» օրենքով, այլ օրենքներով, Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) հաստատած՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններով (այսուհետ՝ ԷՍՕԿ), սույն պայմանագրով և այլ իրավական ակտերով, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն պայմանագրի համաձայն Մատակարարը պարտավոր է միացնել Սպառողի _____ հասցեում գտնվող նոր կառուցվող կամ վերակառուցվող _____ նշանակության
(կենցաղային՝ բնակչի դեպքում/ոչ կենցաղային՝ այլ Սպառողի դեպքում)

սպառման համակարգը (այսուհետ՝ սպառման համակարգ) էլեկտրական ցանցին (այսուհետ՝ էլեկտրական ցանցին միացում) և Սպառողին մատակարարել էլեկտրական էներգիա, իսկ Սպառողը՝ վճարել էլեկտրական ցանցին միացման և մատակարարված էլեկտրական էներգիայի դիմաց՝ բացառությամբ ԷՍՕԿ-ի 24-րդ և 46-րդ կետերով նախատեսված դեպքերի (որոնց դեպքում բնակիչ սպառողը միացման վճար չի վճարում:

2. ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

2. Սպառողի սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման վճարը (այսուհետ՝ Միացման վճար) կազմում է _____ դրամ, ներառյալ ԱԱՀ՝ համաձայն սույն պայմանագրի հավելված N 1-ի:

3. Սպառողը Միացման վճարի 50 տոկոսը (այսուհետ՝ Կանխավճար)՝ բացառությամբ ԷՍՕԿ-ի 24-րդ և 46-րդ կետերով նախատեսված դեպքերի (որոնց դեպքում բնակիչ սպառողը միացման վճար չի վճարում), սույն պայմանագրի կնքման պահից 24 ամսվա ընթացքում փոխանցում է Մատակարարի՝ սույն պայմանագրի վավերապայմաններում նշված Միացման վճարի համար նախատեսված բանկային հաշվին:

4. Մատակարարը էլեկտրական ցանցին միացումն ապահովում է Կանխավճարի վճարմանը հաջորդող _____ օրվա ընթացքում, իսկ ԷՄՕԿ-ով սահմանված 0,22 կՎ կամ 0,4 կՎ լարմամբ պարզեցված միացման դեպքում՝ _____ օրվա ընթացքում (նշված ժամկետները չեն կարող գերազանցել ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետները):

5. ԷՄՕԿ-ով սահմանված բարդ ընթացակարգով էլեկտրական ցանցին միացման դեպքում միացումը կատարվում է համաձայն սույն պայմանագրի հավելված N 2-ով սահմանված տեխնիկական պայմանների և (կամ) N 3 հավելվածով սահմանված էլեկտրամատակարարման միագիծ սխեմայի:

6. Միացման վճարի՝ բացառությամբ ԷՄՕԿ-ի 24-րդ և 46-րդ կետերով նախատեսված դեպքերի (որոնց դեպքում բնակիչ սպառողը միացման վճար չի վճարում), ընդհանուր գումարի և կատարված Կանխավճարի տարբերությունը Սպառողը վճարում է Մատակարարին էլեկտրական ցանցին միացման համար վերջինիս դուրս գրած հաշվարկային փաստաթղթի հիման վրա՝ էլեկտրական ցանցին միացմանը հաջորդող ամսում՝ սպառվող էլեկտրաէներգիայի դիմաց վճարման համար ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում:

7. Սպառողի կողմից սույն պայմանագրի 6-րդ կետով նախատեսված վճարման պարտավորության չկատարման դեպքում վերջինիս էլեկտրամատակարարումը կարող է դադարեցվել սույն պայմանագրի 31-րդ կետի համաձայն:

3. ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՄԱՆ ՓՈՒՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԿՈՂՄԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8. Կողմերը ղեկավարվում են «Էներգետիկայի մասին» օրենքով, այլ օրենքներով, ԷՄՕԿ-ով, սույն պայմանագրով և այլ իրավական ակտերով:

9. Մատակարարը պարտավոր է՝

1) սույն պայմանագրի 4-րդ և 5-րդ կետերի համաձայն ապահովել Սպառողի սպառման համակարգի միացումն էլեկտրական ցանցին.

2) սույն պայմանագրի 11-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն Սպառողի կողմից էլեկտրական էներգիայի ընդունումը չապահովելու դեպքում իրականացնել սպառման համակարգի միացումն էլեկտրական ցանցին՝ Սպառողի կողմից էլեկտրական էներգիայի ընդունումն ապահովելու վերաբերյալ տեղեկացվելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում.

3) սույն պայմանագրի 12-րդ կետի 1-ին ենթակետով և ԷՄՕԿ-ով նախատեսված դեպքերում 5 աշխատանքային օրվա ընթացքում Կանխավճարը վերադարձնել Սպառողին՝ վերջինիս նախընտրած (կանխիկ կամ անկանխիկ) ձևով.

4) սույն պայմանագրի 9-րդ գլխում նախատեսված դեպքերում անհապաղ, բայց ոչ ուշ, քան 3 աշխատանքային օրվա ընթացքում, Սպառողին պատշաճ ձևով տեղեկացնել էլեկտրական ցանցին միացման ժամկետների փոփոխության մասին.

5) Սպառողին վճարել տույժ էլեկտրական ցանցին միացման սույն պայմանագրով նախատեսված ժամկետների խախտման դեպքում՝ համաձայն սույն պայմանագրի 41-րդ կետի:

10. Մատակարարն իրավունք ունի՝

1) Սպառողից պահանջել սույն պայմանագրի 6-րդ կետով սահմանված ժամկետում վճարել Միացման վճարի և Կանխավճարի տարբերությունը.

2) Սպառողի կողմից սույն պայմանագրի 6-րդ կետով սահմանված պարտավորությունը խախտելու դեպքում դադարեցնել Սպառողի էլեկտրամատակարարումը և (կամ) հաշվարկել տույժ՝ սույն պայմանագրի 31-րդ և 42-րդ կետերի համաձայն:

11. Սպառողը պարտավոր է՝

1) վճարել Կանխավճարը, ինչպես նաև Միացման վճարի և Կանխավճարի տարբերությունը՝ սույն պայմանագրի 6-րդ կետի համաձայն.

2) սույն պայմանագրի 4-րդ կետով նախատեսված ժամկետում ապահովել էլեկտրական էներգիայի ընդունումը, իսկ նշված պարտավորության խախտման դեպքում՝ Մատակարարին տեղեկացնել էլեկտրական էներգիան ընդունելուն պատրաստ լինելու մասին:

12. Սպառողն իրավունք ունի՝

1) գրավոր պահանջել Մատակարարից վերադարձնել Կանխավճարը՝ վճարման պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում: Նշված ժամկետի ավարտից հետո Կանխավճարը վերադարձման ենթակա չէ:

2) սույն պայմանագրի 9-րդ կետով սահմանված ժամկետների խախտման դեպքում Մատակարարից պահանջել վճարելու տույժ՝ սույն պայմանագրի 41-րդ կետով սահմանված կարգով:

4. ՄԱՏԱԿԱՐԱՐՎԱԾ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՔԱՆԱԿԻ ԵՎ ԱՐԺԵՔԻ ՀԱՇՎԱՐԿԸ, ԴՐԱ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

13. Սպառված էլեկտրական էներգիայի քանակությունը, բացառությամբ սույն պայմանագրի 14-րդ կետով նախատեսված դեպքի, որոշվում է հաշվարկային ամսում Սպառողի առևտրային հաշվառքի սարքի (հավելված N 4) գրանցած ցուցմունքների տարբերությամբ կամ այդ տարբերությունը չափիչ տրանսֆորատորների տրանսֆորմացիայի գործակիցների արտադրյալով բազմապատկելու միջոցով:

14. Եթե առևտրային հաշվառքի սարքն անմիջապես գրանցում է հաշվարկային ժամանակահատվածում ծախսված էլեկտրական էներգիայի քանակը, ապա որպես հաշվարկային ամսվա ընթացքում սպառված՝ ընդունվում է էլեկտրական էներգիայի այդ քանակը:

15. Առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքը գրանցում է Մատակարարը՝ ԷՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետում:

16. Առևտրային հաշվառքի սարքի խախտման (էլեկտրական էներգիայի քանակության սխալ գրանցման) դեպքում սպառված էլեկտրական էներգիայի քանակությունը որոշվում է հաշվարկային եղանակով՝ համաձայն ԷՄՕԿ-ի պահանջների:

17. Հաշվարկային ամսվա ընթացքում Սպառողի սպառած էլեկտրական էներգիայի արժեքը որոշվում է Հանձնաժողովի կողմից սահմանված սակագների և սպառված էլեկտրական էներգիայի քանակության արտադրյալով: Հանձնաժողովի կողմից էլեկտրական էներգիայի սակագնի փոփոխման դեպքում նոր սակագինն ուժի մեջ է մտնում Հանձնաժողովի սահմանած ժամկետից:

18. Սպառողը նախորդ ամսվա ընթացքում սպառված էլեկտրական էներգիայի արժեքը վճարում է իր կողմից սպառված էլեկտրական էներգիայի քանակի և արժեքի մասին Մատակարարի կողմից սույն պայմանագրի 23-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն տեղեկատվությունը տեղադրվելուց հետո՝ ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում՝ սույն պայմանագրի վավերապայմաններում նշված՝ սպառված էլեկտրական էներգիայի դիմաց վճարման համար նախատեսված բանկային հաշվին:

19. Հաշվարկային փաստաթղթում սխալ հայտնաբերելու դեպքում սխալը հայտնաբերած կողմը փաստի մասին տեղեկացնում է մյուս կողմին: Անհամաձայնության դեպքում կողմը ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում մյուս կողմին գրավոր ներկայացնում է իր պարզաբանումները՝ համապատասխան հիմնավորումներով: Հաշվարկային փաստաթղթում սխալի փաստը հաստատվելու դեպքում Մատակարարը ուղղումը հաշվի է առնում հաջորդ ամսվա համար ներկայացվող հաշվարկային փաստաթղթում:

20. Սույն պայմանագրի համաձայն՝ Մատակարարի հանդեպ Սպառողի դրամական պարտավորությունների առկայության դեպքում Սպառողի վճարումներն առաջնահերթ ռուղղվում են հիմնական պարտավորության մարմանը՝ ըստ դրա վճարման

համար սահմանված ժամկետի վաղեմության, հետո միայն հաշվարկված տույժի մարմանը:

21. Մատակարարի հանդեպ դրամական պարտավորությունների բացակայության դեպքում Սպառողի վճարումները որպես Կանխավճար ուղղվում են ապագայում առաջացող պարտավորությունների կատարմանը՝ համաձայն սույն պայմանագրի 20-րդ կետի:

**5. ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՓՈՆԶԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԿՈՂՄԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

22. Կողմերը ղեկավարվում են «Էներգետիկայի մասին» օրենքով, այլ օրենքներով, ԷՍՕԿ-ով, սույն պայմանագրով և այլ իրավական ակտերով:

23. Մատակարարը պարտավոր է՝

1) սույն պայմանագրի 1-ին կետով նախատեսված հասցեում Սպառողին մատակարարել նորմատիվ իրավական ակտերով սահմանված որակի էլեկտրական էներգիա:

2) ԷՍՕԿ-ով սահմանված ժամկետում հանրապետական սփյուռն առնվազն 1 հեռուստաընկերության միջոցով հայտարարել նախորդ ամսվա ընթացքում Սպառողի կողմից սպառված էլեկտրական էներգիայի քանակի և արժեքի մասին սույն կետի 3-րդ ենթակետով նախատեսված սպասարկման կետերում տեղեկատվությունը հասանելի դարձնելու օրը:

3) նախորդ ամսվա ընթացքում Սպառողի սպառած էլեկտրական էներգիայի քանակի և արժեքի մասին տեղեկատվությունը տեղակայել իր հետ պայմանագիր կնքած Արցախի Հանրապետությունում գործող բանկերի, վճարահաշվարկային կազմակերպությունների, փոստային բաժանմունքների սպասարկման կետերում՝ ԷՍՕԿ-ով սահմանված ժամկետում և կարգով:

4) ապահովել առևտրային հաշվառքի սարքի վրա Սպառողի կողմից դրված կնիքի ամբողջականությունը:

5) Սպառողի դիմումի հիման վրա ԷՍՕԿ-ով սահմանված ժամկետում և կարգով ստուգել Սպառողի առևտրային հաշվառքի սարքի ճշտությունը և Սպառողին ներկայացնել եզրակացություն:

6) իր միջոցների հաշվին կատարել առևտրային հաշվառքի սարքի աշխատանքի ճշտության ստուգման հետ կապված բոլոր ծախսերը, բացառությամբ ԷՍՕԿ-ով նախատեսված դեպքերի:

7) ԷՍՕԿ-ով սահմանված դեպքերում և ժամկետում ստուգել և ճշգրտել էլեկտրոնային առևտրային հաշվիչի ժամերը, այնպես, որ դրանք ճշգրիտ հաշվառեն Հանձնաժողովի կողմից սահմանված՝ գիշերային և ցերեկային ժամերին սպառված էլեկտրաէներգիայի քանակությունները:

8) առևտրային հաշվառքի սարքի աշխատանքի ճշտության ստուգում իրականացնելու դեպքում այդ մասին ԷՍՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետում զգուշացնել Սպառողին՝ համաձայնեցնելով ստուգման ժամկետները:

9) Սպառողի դիմումի հիման վրա կամ իր նախաձեռնությամբ ԷՍՕԿ-ով սահմանված դեպքերում և կարգով փոխարինել Սպառողի առևտրային հաշվառքի սարքը և համապատասխան փոփոխություն կատարել սույն պայմանագրում:

10) շուրջօրյա գործող _____ հեռախոսահամարով Սպառողի դիմելու դեպքում Սպառողին տրամադրել տեղեկատվություն կամ պարզաբանում վերջինիս հարցադրումների՝ ներառյալ էլեկտրամատակարարման ընդհատումների, դադարեցումների պատճառների և վերականգնման ժամկետների, սպառած էլեկտրական էներգիայի արժեքի և քանակության, վճարման ժամկետների, Մատակարարի և Սպառողի իրավունքների ու պարտականությունների և այլնի վերաբերյալ:

11) ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում սպառիչ կերպով պատասխանել Սպառողի բանավոր դիմումին՝ բանավոր, գրավոր դիմումին՝ գրավոր, իսկ էլեկտրոնային փոստով ստացված դիմումին՝ էլեկտրոնային փոստի միջոցով:

12) Սպառողին տեղեկացնել էլեկտրամատակարարման պլանային և արտապլանային ընդհատումների ու վերականգնման ժամկետների մասին՝ ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում և կարգով:

13) Սպառողի դիմումի հիման վրա առևտրային (վերստուգիչ) հաշվիչի էլեկտրական էներգիայի հաշվառման և վերահսկման ավտոմատացված համակարգում վերջինիս համար բացել անձնական էջ և տրամադրել մուտքի անուն և գաղտնաբառ:

14) Առևտրային հաշվառքի սարքի ապահովաքակցման կամ փոխարինման դեպքում ԷՄՕԿ-ով սահմանված կարգով կազմել ակտ՝ կցելով սույն պայմանագրին:

24. Մատակարարն իրավունք ունի՝

1) Սպառողից պահանջել վճարելու սպառած էլեկտրական էներգիայի դիմաց սույն պայմանագրով, ԷՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետում:

2) Սպառողից պահանջել մատակարարված էլեկտրական էներգիան օգտագործել սույն պայմանագրի 1-ին կետով սահմանված նշանակությամբ:

25. Սպառողը պարտավոր է՝

1) վճարել նախորդ ամսվա ընթացքում սպառած էլեկտրական էներգիայի արժեքն իր կողմից սպառված էլեկտրական էներգիայի քանակի և արժեքի մասին տեղեկատվությունը սույն պայմանագրի 23-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված ժամկետում հասանելի դառնալուց հետո՝ ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում:

2) մատակարարվող էլեկտրական էներգիան օգտագործել սույն պայմանագրի 1-ին կետում նշված նշանակությամբ:

3) ապահովել իր սպառման համակարգում գտնվող էլեկտրատեղակայանքների պահպանման, սպասարկման և շահագործման անվտանգությունը:

4) չխախտել Մատակարարի սեփականությունը հանդիսացող առևտրային հաշվառքի սարքի, դրա կնիքների և տեղակայման արկղի ամբողջականությունը, խախտումներ հայտնաբերելու դեպքում անհապաղ հայտնել Մատակարարին:

5) իր սեփականությունը հանդիսացող էլեկտրամատակարարվող տարածքը վաճառելու կամ այլ կերպ օտարելու դեպքում դիմել Մատակարարին՝ վերջնահաշվարկ կատարելու, էլեկտրամատակարարումը դադարեցնելու և պայմանագիրը լուծելու համար, ինչի վերաբերյալ Մատակարարը տեղեկանք է տալիս Սպառողին:

26. Սպառողն իրավունք ունի՝

1) կնքել առևտրային հաշվառքի սարքը, դիմել Մատակարարին առևտրային հաշվառքի սարքի ճշտությունը ստուգելու համար, մասնակցել դրա աշխատանքի ճշտության ստուգման հետ կապված բոլոր աշխատանքներին, այդ թվում նաև՝ ստուգաչափմանը, ԷՄՕԿ-ով սահմանված կարգով առևտրային հաշվառքի սարքի ճշտության ստուգումը պատվիրել նման իրավասություն ունեցող այլ կազմակերպությունների: Սպառողի կողմից առևտրային հաշվառքի սարքը կնքելու դեպքում այդ մասին սույն պայմանագրի հավելված N 4-ում կատարվում է համապատասխան գրառում:

2) դիմել Մատակարարին իր առևտրային հաշվառքի սարքը փոխարինելու համար:

3) դիմել Մատակարարին՝ մասնակցելու առևտրային (վերստուգիչ) հաշվառքի սարքի ցուցմունքի գրանցմանը՝ ԷՄՕԿ-ով սահմանված կարգով:

6. ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԸՆԴՀԱՏՈՒՄԸ ԿԱՄ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

27. Էլեկտրամատակարարման պլանային և արտապլանային ընդհատումների տարեկան կտրվածքով առավելագույն գումարային տևողությունը սահմանվում է ԷՄՕԿ-ով: Եթե Սպառողի (բացառությամբ բնակիչ-բաժանորդների) էլեկտրամա-

տակարարման սխեման ապահովում է էլեկտրամատակարարման վերականգնման ավելի կարճ ժամանակահատված, քան սահմանված է ԷՄՕԿ-ով, ապա Մատակարարը և Սպառողը պարտավոր են սույն պայմանագրի հավելված N 7-ում սահմանել այդ ժամանակահատվածը:

28. Էլեկտրամատակարարման պլանային և արտապլանային ընդհատումների ու վերականգնման ժամկետների մասին Մատակարարը տեղեկացնում է ԷՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետներում:

29. Չի թույլատրվում այն սպառողների էլեկտրամատակարարման պլանային ընդհատում, որոնց էլեկտրամատակարարումը նախատեսված է իրականացնել 6(10) կՎ և բարձր լարման 2 և ավելի անկախ սնուցում ունեցող օդային (մալուխային) գծերով կամ կայանի (ենթակայանի) 2 հոծանային համակարգերից կամ սեկցիաներից: Մյուս բոլոր դեպքերում Մատակարարը Սպառողի էլեկտրամատակարարման պլանային ընդհատումը պետք է իրականացնի աշխատանքային օրերին՝ ԷՄՕԿ-ով սահմանված ժամանակահատվածում:

30. Սպառողը (բացառությամբ բնակիչ-բաժանորդների) և Մատակարարը, փոխհամաձայնեցված կարգով իրավունք ունեն սույն պայմանագրի հավելված N 7-ում ամրագրել՝

1) ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետներից տարբերվող էլեկտրամատակարարման պլանային ընդհատումների այլ ժամկետներ (օր կամ ժամեր), եթե դա չի հանգեցնում բնակչության կամ այլ սպառողների համար ԷՄՕԿ-ով սահմանված էլեկտրամատակարարման պլանային ընդհատումների ժամկետների խախտման:

2) էլեկտրամատակարարման պլանային ընդհատումների և վերականգնման ժամկետների մասին տեղեկացման այլ կարգ և ժամկետներ:

31. Մատակարարն իրավունք ունի դադարեցնել Սպառողի էլեկտրամատակարարումը՝

1) սույն պայմանագրի 6-րդ կետի համաձայն Միացման վճարի և կատարված Կանխավճարի տարբերությունը չվճարելու դեպքում:

2) սպառված էլեկտրական էներգիայի դիմաց սույն պայմանագրով սահմանված ժամկետներում և կարգով վճարում չկատարելու դեպքում:

3) եթե Մատակարարին թույլ չի տրվել Սպառողի հետ համաձայնեցված ժամանակացույցով սպասարկել էլեկտրամատակարարվող տարածքում տեղակայված էլեկտրատեղակայանքները, այդ թվում՝ էլեկտրական էներգիայի հաշվառքի սարքերը՝ անկախ դրանց պատկանելությունից:

4) եթե Սպառողը էլեկտրական էներգիան սպառել է առևտրային հաշվառքի սարքի միտումնավոր խախտումով կամ առևտրային հաշվառքի սարքի շրջանցումով:

5) սույն պայմանագրի 1-ին կետով նախատեսված հասցեում գտնվող սպառման համակարգից դուրս էլեկտրական էներգիան սպառելու դեպքում:

6) էլեկտրական էներգիան սույն պայմանագրի 1-ին կետում նշված նշանակությամբ չօգտագործելու դեպքում:

32. Մատակարարը պարտավոր է դադարեցնել Սպառողի էլեկտրամատակարարումը՝

1) Սպառողի գրավոր դիմումի համաձայն՝ վերջինիս նշած ժամկետում:

2) էլեկտրամատակարարվող տարածքի (շենքի, շինության) նկատմամբ իրավունք ունեցող անձի գրավոր պահանջի և առաջարկվող ժամկետի ներկայացման դեպքում, եթե Սպառողը չունի տարածքի (շենքի, շինության) նկատմամբ իր իրավունքները կամ իրավունքների ձեռքբերումը հավաստող (հաստատող) փաստաթուղթ, բացառությամբ ԷՄՕԿ-ով սահմանված դեպքերի:

3) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:

33. Էլեկտրամատակարարման սահմանափակումները և վերականգնումն իրականացվում են ԷՄՕԿ-ով և Հանձնաժողովի կողմից սահմանված այլ իրավական ակտերի համաձայն:

34. Պայմանագրում ամրագրված վթարային կամ տեխնոլոգիական հզորություն ունեցող Սպառողի կողմից սահմանված ժամկետում վճարում չկատարելու դեպքում վերջինիս էլեկտրական էներգիայի մատակարարման սահմանափակումն ու դադարեցումն իրականացվում են ԷՄՕԿ-ով և սույն պայմանագրի հավելված N 7-ով սահմանված կարգով և ժամկետներում:

7. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ

35. Սպառողի էլեկտրամատակարարման նպատակով օգտագործվող էլեկտրատեղակայանքների և առևտրային հաշվառքի սարքերի ձեռքբերման, տեղակայման, փոխարինման և շահագործման ծախսերն իրականացվում է ԷՄՕԿ-ով սահմանված կարգով:

36. Սպառողի կողմից առևտրային հաշվառքի սարքը կնքելու դեպքում այդ մասին սույն պայմանագրի հավելված N 4-ում կատարվում է համապատասխան գրառում:

37. Սպառողի կողմից (բացառությամբ բնակիչ-բաժանորդների) վերստուգիչ հաշվառքի սարք (հաշվիչ) տեղադրելու դեպքում դրա վերաբերյալ տվյալները նշվում են սույն պայմանագրի հավելված N 4-ում:

38. Մատակարարն իրավունք ունի Սպառողի կողմից վճարման համար սահմանված ժամկետի խախտման դեպքում ԷՄՕԿ-ով սահմանված կարգով Սպառողից պահանջել Կանխավճար կամ իր համար ընդունելի վճարման այլ երաշխիքներ:

39. Էլեկտրական ցանցին ժամանակավոր միացման ԷՄՕԿ-ով սահմանված դեպքերում Սպառողի սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացվում է Մատակարարից ժամանակավոր միացման տեխնիկական պայմաններ (հավելված N 2) ստանալու միջոցով՝ ԷՄՕԿ-ով սահմանված կարգով:

8. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

40. Սույն պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կողմերը պատասխանատվություն են կրում օրենքներով, ԷՄՕԿ-ով և սույն պայմանագրով սահմանված կարգով:

41. Սույն պայմանագրի 9-րդ կետով նախատեսված ժամկետների խախտման դեպքում Սպառողն իրավունք ունի Մատակարարից պահանջել վճարելու տույժ կետանցի յուրաքանչյուր օրվա համար էլեկտրական ցանցին Միացման վճարի 0,1 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան Միացման վճարի ընդհանուր գումարը, բացառությամբ, եթե Սպառողը չի ապահովել իր սպառման համակարգի՝ էլեկտրական ցանցին միացման համար անհրաժեշտ աշխատանքները կամ եթե առկա են սույն պայմանագրով նախատեսված ֆորս մաժորային հանգամանքներ:

42. Միացման վճարի և Կանխավճարի տարբերությունը վճարելու՝ սույն պայմանագրի 6-րդ կետում սահմանված ժամկետը խախտելու դեպքում Մատակարարն իրավունք ունի Սպառողից պահանջել վճարելու տույժ կետանցի յուրաքանչյուր օրվա համար՝ Միացման վճարի և Կանխավճարի տարբերության 0,1 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան Միացման վճարի և Կանխավճարի տարբերության չափը:

43. Եթե Սպառողի էլեկտրամատակարարումն իրականացվել է սպասարկման որակի սահմանված պահանջների խախտմամբ, ապա Մատակարարը պարտավոր է ԷՄՕԿ-ով սահմանված կարգով Սպառողին վճարել տույժ:

44. Սպառողի (բացառությամբ բնակիչ-բաժանորդների) կողմից սույն պայմանագրի 25-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն վճարման ժամկետը խախտելու դեպքում Մատակարարն իրավունք ունի Սպառողից պահանջել վճարելու տույժ՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար չվճարված գումարի 0,1 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան չվճարված գումարի 10 տոկոսը:

45. Առևտրային հաշվառքի սարքի շրջանցումով Սպառողի կողմից էլեկտրա-
էներգիա սպառելու դեպքում սպառված էլեկտրաէներգիայի քանակը որոշվում է
Արցախի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով:

9. ՖՈՐՄ ՄԱԺՈՐԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

46. Կողմերը սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների
խախտման համար պատասխանատվություն չեն կրում, եթե այն հետևանք է ֆորս
մաժորի: Սույն պայմանագրի իմաստով ֆորս մաժոր են համարվում արտակարգ և
անկանխելի այն դեպքերն ու հանգամանքները, որոնք առաջացել են կողմերի կամքից
անկախ և մինչև ժամանակ անկախ վերջիններիս գործադրած ջանքերից, խոչընդո-
տել են պարտավորությունների կատարմանն ուղղված Կողմերի գործողություններին:

47. Սույն պայմանագրի իմաստով արտակարգ և անկանխելի դեպքեր և
հանգամանքներ են պետական իրավասու մարմինների կողմից ընդունված ակտերը,
վերջիններիս գործողությունները կամ անգործությունը, բնական և տեխնածին
աղետները, բնության ուժերի արտասովոր դրսևորումները (այդ թվում՝ ջրհեղեղներ,
երկրաշարժեր, փոթորիկներ, պտտահողմեր, կայծակով և ամպրոպով ուղղորդվող
հորդառատ անձրևներ, ձնաբքեր, սողանքներ), գործադուլները, հասարակական
անկարգությունները, ահաբեկչությունները, պատերազմները, ապստամբությունները:
Սույն կետը չի սահմանափակում կողմերի իրավունքը նկարագրվածից բացի այլ
արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ ի հայտ գալու պարագայում
դիմել Հանձնաժողով՝ դրանք ֆորս-մաժոր ճանաչելու համար:

48. Կողմերը պարտավոր են վերոհիշյալ իրավիճակների մասին անհապաղ տեղե-
կացնել միմյանց՝ նշելով դրանց հետևանքների վերացման հնարավոր ժամկետները:

10. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

49. Սույն պայմանագրի առնչությամբ Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են
բանակցությունների միջոցով, իսկ Կողմերից 1-ի գրավոր դիմումի դեպքում՝
Հանձնաժողովի միջնորդությամբ:

50. Սույն պայմանագրի 49-րդ կետը չի սահմանափակում Կողմերի իրավունքը՝
վեճերը լուծելու դատական կարգով:

11. ՊՅՑՄԱՆԱԳՐԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ, ՓՈՓՈԽՄԱՆ ԵՎ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

51. Սույն պայմանագրով սահմանված՝ էլեկտրական ցանցին միացմանը
վերաբերող դրույթներն ուժի մեջ են մտնում սույն պայմանագրի ստորագրման պահից
և գործում են մինչև սույն պայմանագրի 1-ին կետով ամրագրված սպառման
համակարգն էլեկտրական ցանցին միացմանը վերաբերող Կողմերի պարտավորու-
թյունների ամբողջական կատարումը:

52. Սույն պայմանագրով սահմանված՝ էլեկտրական էներգիայի մատակարար-
մանը վերաբերող դրույթներն ուժի մեջ են մտնում էլեկտրական ցանցին Սպառողի
առաջին փաստացի միացման պահից, իսկ վերակառուցվող սպառման համակարգի
դեպքում՝ սույն պայմանագրի ստորագրման պահից և գործում են _____
ժամկետով: Պայմանագիրը բոլոր դեպքերում կնքվում է անորոշ ժամկետով, եթե
ԷՄՕԿ-ով տվյալ դեպքի համար նախատեսված չէ ժամանակավոր պայմանագրի
կնքում:

53. Սույն պայմանագրի 52-րդ կետի համաձայն ժամանակավոր պայմանագրի
կնքման դեպքում ժամկետը լրանալուց 1 ամիս առաջ Կողմերից յուրաքանչյուրը կարող
է ծանուցել մյուս կողմին պայմանագրի գործողության դադարեցման մասին: Եթե
ժամկետի ավարտից հետո Սպառողը Մատակարարի ծանուցման բացակայությամբ

շարունակում է սպառել էլեկտրական էներգիա, սույն պայմանագրի գործողությունը համարվում է երկարաձգված՝ նույն պայմաններով և նույն ժամկետով:

54. Սույն պայմանագիրը լուծվում է՝

1) կողմերի փոխադարձ համաձայնությամբ.

2) Սպառողի կողմից միակողմանի՝ այդ մասին Մատակարարին տեղեկացնելու և մատուցված ծառայությունների համար ամբողջությամբ վճարելու պայմանով.

Հ/Հ	Աշխատանքի բովանդակությունը	Մարդ /օր	Աշխատանքի արժեքը (ՀՀ դրամ՝ ներառյալ եկամտային հարկը և սոցիալական վճարը)	Գյուղատնտեսական տեխնիկա/ժամ	Աշխատանքի արժեքը (ՀՀ դրամ՝ ներառյալ եկամտային հարկը և սոցիալական վճարը)
1.	Պարարտացում	-	-	1	2581
2.	Հերկ	-	-	2	12903
3.	Նախացանքային կուլտիվացիա	-	-	1	6452
4.	Ցանքս	-	-	1	6452
5.	Կուլտիվացիա+անուցում (2 անգամ)	1	12903	1	12903
6.	Պայքար մոլախոտերի դեմ	-	-	1	3871
7.	Պայքար հիվանդությունների և վնասատուների դեմ	-	-	1	3871
8.	Ոռոգում (2 անգամ)	2	30967	-	-
9.	Բերքահավաք	-	-	1	29677

3. Հատիկարնդեղեն 1 հեկտար

Հ/Հ	Աշխատանքի բովանդակությունը	Մարդ /օր	Աշխատանքի արժեքը (ՀՀ դրամ՝ ներառյալ եկամտային հարկը և սոցիալական վճարը)	Գյուղատնտեսական տեխնիկա/ժամ	Աշխատանքի արժեքը (ՀՀ դրամ՝ ներառյալ եկամտային հարկը և սոցիալական վճարը)
1.	Հերկ	-	-	2	12903
2.	Կուլտիվացիա	-	-	1	6452
3.	Ցանքս	-	-	1	6452
4.	Պայքար մոլախոտերի դեմ	-	-	1	3871
5.	Պայքար հիվանդությունների և վնասատուների դեմ	-	-	1	3871
6.	Բերքահավաք	-	-	1	14406

4. Կարտոֆիլ 1 հեկտար

Հ/Հ	Աշխատանքի բովանդակությունը	Մարդ/օր	Աշխատանքի արժեքը (ՀՀ դրամ՝ ներառյալ եկամտային հարկը և սոցիալական վճարը)	Գյուղատնտեսական տեխնիկա/ժամ	Աշխատանքի արժեքը (ՀՀ դրամ՝ ներառյալ եկամտային հարկը և սոցիալական վճարը)
1.	Պարարտացում	-	-	1	2581
2.	Հերկ	-	-	2	12903
3.	Նախացանքային կուլտիվացիա	-	-	1	6452

4.	Տունկ	4	25806	1	25806
5.	Կուլտիվացիա+Մնուցում (2 անգամ)	1	12903	1	12903
6.	Պայքար հիվանդությունների և վնասատուների դեմ (3 անգամ)	-	-	1	11613
7.	Ոռոգում (3 անգամ)	2	46452	-	-
8.	Բերքահավաք	10	64516	1	49032

5. Ծխախոտ 1 հեկտար

Հ/Հ	Աշխատանքի բովանդակությունը	Մարդ /օր	Աշխատանքի արժեքը (ՀՀ դրամ՝ ներառյալ եկամտային հարկը և սոցիա- լական վճարը)	Գյուղա- տնտե- սական տեխնի- կա/ժամ	Աշխատանքի արժեքը (ՀՀ դրամ՝ ներառյալ եկամտային հարկը և սոցիա- լական վճարը)
1.	Հերկ	-	-	2	12903
2.	Նախացանքային կուլտիվացիա (2 անգամ)	-	-	1	12903
3.	Դաշտի տեղաձևում	2	12903	-	-
4.	Մարգերի պատրաստում	-	-	1	6452
5.	Զրատար ակոսի հանում	-	-	1	5161
6.	Սածիլում	10	64516	-	-
7.	Մնուցում (2 անգամ)	1	12903	1	2581
8.	Քաղիան (3 անգամ), փխրեցում	20	387096	-	-
9.	Ծերատում և բջատում	7	45161	-	-
10.	Պայքար հիվանդությունների և վնասատուների դեմ (2 անգամ)	-	-	1	7742
11.	Ոռոգում (8 անգամ)	1	123871	-	-
12.	Բերքահավաք (4 անգամ)	10	280065	-	-
13.	Դաշտի մաքրում բույսերի մնացորդներից	-	-	1	18065

6. Բանջարեղեն 1 հեկտար

Հ/Հ	Աշխատանքի բովանդակությունը	Մարդ/ օր	Աշխատանքի արժեքը (ՀՀ դրամ՝ ներառյալ եկամտային հարկը և սոցիա- լական վճարը)	Գյուղա- տնտե- սական տեխնի- կա/ժամ	Աշխատանքի արժեքը (ՀՀ դրամ՝ ներառյալ եկամտային հարկը և սոցիա- լական վճարը)
1.	Պարարտացում	-	-	1	2581
2.	Հերկ	-	-	2	12903
3.	Կուլտիվացիա (2 անգամ)	-	-	1	12903
4.	Ցանքս, սածիլում	10	64516	-	-
5.	Մնուցում (2 անգամ ձեռքով)	3	38709	-	-
6.	Բուկլից (2 անգամ)	10	129032	-	-

7.	Պայքար հիվանդությունների և վնասատուների դեմ, տերևային սնուցում (5 անգամ)	-	-	1	19355
8.	Ոռոգում (9 անգամ)	1	174193	-	-
9.	Բերքահավաք (5 անգամ)	10	322581	-	-

7. Բոստանային մշակաբույսեր 1 հեկտար

Հ/Հ	Աշխատանքի բովանդակությունը	Մարդ/օր	Աշխատանքի արժեքը (ՀՀ դրամ՝ ներառյալ եկամտային հարկը և սոցիալական վճարը)	Գյուղատնտեսական տեխնիկա/ժամ	Աշխատանքի արժեքը (ՀՀ դրամ՝ ներառյալ եկամտային հարկը և սոցիալական վճարը)
1.	Պարարտացում	-	-	1	2581
2.	Հերկ	-	-	2	12903
3.	Կուլտիվացիա (2 անգամ)	-	-	1	12903
4.	Ակունների հանում	-	-	1	2581
5.	Սածիլում	4	25806	-	-
6.	Սնուցում (2 անգամ ձեռքով)	2	25806	-	-
7.	Քաղհան, փխրեցում (2 անգամ)	-	-	1	12903
8.	Պայքար հիվանդությունների և վնասատուների դեմ, տերևային սնուցում (3 անգամ)	-	-	1	11613
9.	Ոռոգում (6 անգամ)	1	116129	-	-
10.	Բերքահավաք (5 անգամ)	5	161290	-	-

8. Խաղողի բերքատու այգի 1 հեկտար

Հ/Հ	Աշխատանքի բովանդակությունը	Մարդ/օր	Աշխատանքի արժեքը (ՀՀ դրամ՝ ներառյալ եկամտային հարկը և սոցիալական վճարը)	Գյուղատնտեսական տեխնիկա/ժամ	Աշխատանքի արժեքը (ՀՀ դրամ՝ ներառյալ եկամտային հարկը և սոցիալական վճարը)
1.	Կոտրված պտուների փոխում	3	19355	-	-
2.	Մյուների և լարերի ուղղում ու ձգում	5	32258	-	-
3.	Էտ և շիվերի հավաքում ու դուրսբերում այգուց	15	96774	-	-
4.	Չոր կապ	7	45161	-	-
5.	Միջշարային տարածությունների վար	-	-	1	12903
6.	Միջվազային տարածությունների փոր	22	141936	-	-
7.	Առուների մաքրում	3	19355	-	-
8.	Ջրվորի ծառայություններ	3	19355	-	-
9.	Միջշարային տարածությունների քաղհան-փխրեցում	-	-	1	19355

	մեքենայացված (3 անգամ)				
10.	Միջվազային տարածությունների քաղհան-փխրեցում ձեռքով	15	96774	-	-
11.	Կանաչ հատումներ և հատված մասսայի հեռացում	7	45161	-	-
12.	Կանաչ կապ	7	45161	-	-
13.	Պայքար սնկային հիվանդությունների և վնասատուների դեմ (5 անգամ)	-	-	1	38710
14.	Բերքահավաք, բերքի տեղափոխում այգու տարածքում և բարձում (այգու բերքատվությունը 150g/հա և ավելի լինելու դեպքում)	30	193549	-	-

9. Պտղատու բերքատու այգի 1 հեկտար

Հ/Հ	Աշխատանքի բովանդակությունը	Մարդ/օր	Աշխատանքի արժեքը (ՀՀ դրամ՝ ներառյալ եկամտային հարկը և սոցիալական վճարը)	Գյուղատնտեսական տեխնիկա/ժամ	Աշխատանքի արժեքը (ՀՀ դրամ՝ ներառյալ եկամտային հարկը և սոցիալական վճարը)
1.	Հերկ	-	-	1	12903
2.	Ծառերի ձևավորում (էտ)	8	50633.0	-	-
3.	Կտրտված ճյուղերի հավաքում ուղուրսբերում այգուց	4	25806	-	-
4.	Միջշարային տարածությունների քաղհան-փխրեցում մեքենայացված (3 անգամ)	-	-	1	19355
5.	Միջբնային տարածությունների փոր	12	77420	-	-
6.	Պայքար հիվանդությունների և վնասատուների դեմ(4 անգամ)	-	-	1	30968
7.	Այգու ոռոգում (5 անգամ)	3	116129	-	-
8.	Բերքահավաք	21	135484	-	-

10. Հատիկարնդեղեն 0,1 հեկտար

Հ/Հ	Աշխատանքի բովանդակությունը	Մարդ/օր	Աշխատանքի արժեքը (ՀՀ դրամ՝ ներառյալ եկամտային հարկը և սոցիալական վճարը)
1.	Հողի փոր	5	38710
2.	Ակոսների հանում և ցանքս	4	30968
3.	Քաղհան	6	46451
4.	Պայքար հիվանդությունների և վնասատուների դեմ	1	7742
5.	Ոռոգում (7 անգամ)	1	54193
6.	Բերքահավաք	8	61936
	Ընդամենը		240000

11. Կարտոֆիլ 0,1 հեկտար

Հ/Հ	Աշխատանքի բովանդակությունը	Մարդ/օր	Աշխատանքի արժեքը (ՀՀ դրամ՝ ներառյալ եկամտային հարկը և սոցիալական վճարը)
1.	Հողի փոր	5	38710
2.	Ակոսների հանում և ցանքս	4	30968
3.	Քաղիհան, բուկլից+սնուցում (2 անգամ)	6	92903
4.	Պայքար հիվանդությունների և վնասատուների դեմ(2 անգամ)	1	15484
5.	Ոռոգում (7 անգամ)	1	54194
6.	Բերքահավաք	8	61935
Ընդամենը			294194

12. Բանջարեղեն 0,1 հեկտար

Հ/Հ	Աշխատանքի բովանդակությունը	Մարդ/օր	Աշխատանքի արժեքը (ՀՀ դրամ՝ ներառյալ եկամտային հարկը և սոցիալական վճարը)
1.	Հողի փոր	5	38710
2.	Ակոսների հանում և սածիլում	5	38710
3.	Քաղիհան	6	46451
4.	Բուկլից+սնուցում (2 անգամ)	6	92902
5.	Պայքար հիվանդությունների և վնասատուների դեմ, տերևային սնուցում (5 անգամ)	1	38710
6.	Ոռոգում (9 անգամ)	1	69710
7.	Բերքահավաք (5 անգամ)	4	154839
Ընդամենը			480000

13. Բոստանային մշակաբույսեր 0,1 հեկտար

Հ/Հ	Աշխատանքի բովանդակությունը	Մարդ/օր	Աշխատանքի արժեքը (ՀՀ դրամ՝ ներառյալ եկամտային հարկը և սոցիալական վճարը)
1.	Հողի փոր	5	38710
2.	Ակոսների հանում և սածիլում	3	23226
3.	Մնուցում (2 անգամ ձեռքով)	1	15484
4.	Քաղիհան, փխրեցում (2անգամ)	6	92903
5.	Պայքար հիվանդությունների և վնասատուների դեմ, տերևային սնուցում (3 անգամ)	1	23226
6.	Ոռոգում (6 անգամ)	1	46451
7.	Բերքահավաք (5 անգամ)	3	116129
Ընդամենը			356129

»:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ԵՎ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

2019 թվականի նոյեմբերի 6-ի

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 5-Ի N 1-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ, ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ
15-Ի N 3-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԵՎ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-Ի N 3-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

N 8-Ն

ՀՐԱՄԱՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածին համապատասխան.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2015 թվականի փետրվարի 5-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 14-ի N 663-Ն որոշման կիրարկումն ապահովելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2012 թվականի փետրվարի 20-ի N 2-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1-Ն հրամանում կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունը.

1) հրամանի N 12 հավելվածով հաստատված պայմանագրի 9-րդ կետի 3-րդ ենթակետում «հարկը» բառից հետո լրացնել «և օրենքով սահմանված դեպքերում՝ պարտադիր դրոշմանիշային ու սոցիալական վճարները» բառերը.

2) հրամանի N 13 հավելվածով հաստատված հայտ-պահանջագրի 12-13-րդ պյունները փոխարինել 12-15-րդ պյուններով և շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

Մասնագիտական փորձ ձեռք բերողին տրվող աշխատավարձից հաշվարկվող սոցիալական վճարի չափը	Մասնագիտական փորձ ձեռք բերողին տրվող աշխատավարձից հաշվարկվող պարտադիր դրոշմանիշային վճարի չափը	Մասնագիտական փորձ ձեռք բերողին տրվող վերջնահաշվարկի չափը	Ընդ որում (սյուն 9+ սյուն 10+ սյուն 11+ սյուն 12+սյուն 13+ սյուն 14)
12	13	14	15

»:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2017 թվականի մայիսի 15-ի «Վարձատրվող հասարակական աշխատանքների իրականացման

պայմանագրի ձևը հաստատելու մասին» N 3-Ն հրամանի հավելվածով հաստատված պայմանագրում կատարել հետևյալ լրացումները.

1) 3-րդ կետի 4-րդ ենթակետում, 4-րդ կետի 6-րդ ենթակետում «հարկը» բառից հետո լրացնել «և օրենքով սահմանված դեպքերում՝ պարտադիր դրոշմանիշային և սոցիալական վճարները» բառերը.

2) 6-րդ կետի 1-ին ենթակետում «հարկը» բառից հետո լրացնել «և օրենքով սահմանված դեպքում՝ սոցիալական վճարը» բառերը:

3. Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարի 2019 թվականի ապրիլի 12-ի «Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի մարտի 11-ի N 143-Ն որոշման կիրարկումն ապահովելու մասին» N 3-Ն հրամանի N 3 հավելվածով հաստատված պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) 3-րդ կետի 4-րդ ենթակետում, 6-րդ կետի 3-րդ ենթակետում «վճարի» բառը փոխարինել «և սոցիալական վճարների» բառերով.

2) 7-րդ կետում «հարկը» բառից հետո լրացնել «, օրենքով սահմանված դեպքում՝ սոցիալական վճարը» բառերը:

**ԱՐՑԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ԵՎ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Ս. ԱՎԱՆԵՍՅԱՆ

2019 թվականի նոյեմբերի 6
ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

ՀՐԱՄԱՆ

«30» հոկտեմբերի 2019թ.

N 300-Ա

ք.Ստեփանակերտ

**«ԴԵՆՏԱԼ-ՖԱՐՄ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎ ԴԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՎԱՅՐԻ ՓՈՓՈԽՄԱՆՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասը և «ԴԵՆՏԱԼ-ՖԱՐՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Մ.Ղուկասյանի դիմումը

ՀՐԱՄԱՅՈՒՄԵՄ

1. «ԴԵՆՏԱԼ-ՖԱՐՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (2016 թվականի սեպտեմբերի 13-ին տրված NԿ-XX-000301 լիցենզիա) ընտանեկան ստոմատոլոգիական գործունեության իրականացման վայրը՝ ԱՀ Քաջաթաղի շրջան ք.Բերձոր Խաղաղության հրապարակ 1^Գ հասցեից փոխել ԱՀ Քաջաթաղի շրջան ք.Բերձոր 3-րդ թաղամաս Խաղաղության հրապարակ 18 հասցեի:

2.Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի իրավաբանական և լիցենզավորման բաժնի վարիչ Լ.Հովհաննիսյանին՝

1) ապահովել լիցենզիայի գործունեության իրականացման վայրի վերաբերյալ կատարված փոփոխության մասին տեղեկության գրանցումը համապատասխան գրանցամատյանում.

2) եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը նորմատիվ իրավական ակտերը հրապարակող մարմնին և դիմումատուին:

Ա.ԲԱՂՐՅԱՆ

**Ա Ր Ց Ա Խ Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն
Ա Ռ Ո Ղ Ջ Ա Պ Ա Հ ՈՒ Թ Յ Ա Ն Ն Ա Խ Ա Ր Ա Ր**

ՀՐԱՄԱՆ

«31» հոկտեմբերի 2019թ.

N 304-Ա

ք.Ստեփանակերտ

**«ԴԵՆՏԱԼ-ՖԱՐՄ» ՄԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՎԱՅՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասը և «ԴԵՆՏԱԼ-ՖԱՐՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Մ.Ղուկասյանի դիմումը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «ԴԵՆՏԱԼ-ՖԱՐՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (2015 թվականի սեպտեմբերի 10-ին տրված N Կ-XX-000293 լիցենզիա) դեղատնային գործունեության իրականացման վայրը՝ ԱՀ Քաջաթաղի շրջան ք.Բերձոր Խաղաղության հրապարակ 1^ա հասցեից փոխել ԱՀ Քաջաթաղի շրջան ք.Բերձոր 3-րդ թաղամաս Խաղաղության հրապարակ 18 հասցեի:

2.Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի իրավաբանական և լիցենզավորման բաժնի վարիչ Լ.Հովհաննիսյանին՝

1) ապահովել լիցենզիայի գործունեության իրականացման վայրի վերաբերյալ կատարված փոփոխության մասին տեղեկության գրանցումը համապատասխան գրանցամատյանում.

2) եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը նորմատիվ իրավական ակտերը հրապարակող մարմնին՝ պաշտոնական տեղեկագրում հրապարակելու համար և դիմումատուին:

Ա.ԲԱՂԲԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ԵՎ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

«04» նոյեմբերի 2019 թվական

N 182U

ք.Ստեփանակերտ

**«ԱՐԳԻԱՐՏ» ՍԱՀՄԱՆԱՓՈՒԿ ՊԱՏԱՄԵԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ
ՎՏԱՆԳԱՎՈՐ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԼԻՑԵՆԶԻԱ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Թափոնների մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի ժե.1)-ին ենթակետով և Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2003 թվականի նոյեմբերի 28-ի N 335 որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետը և հիմք ընդունելով վտանգավոր թափոնների գործածության գործունեության հանձնաժողովի 2019 թվականի հոկտեմբերի 29-ի N 1 եզրակացությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Բավարարել «ԱրգիԱրտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության դիմումը և տրամադրել վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզիա և լիցենզիային կից վտանգավոր թափոնների փոխադրման և վտանգավոր թափոնների վնասազերծման ներդիրներ՝ անժամկետ:

2. Նախարարության աշխատակազմի քարտուղարության բաժնի պետին՝ ապահովել սույն հրամանի առաքումն Արցախի Հանրապետության արդարադատության նախարարություն հրապարակման նպատակով:

Ֆ.ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

2019 թվականի հոկտեմբերի 30-ի

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԵԽՆԻԿԱՏՆԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ «ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳԻՉԸ» ԿԻՐԱՌՄԱՆ ՄԵՋ ԴՆԵԼՈՒ
ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՄԻ 3-Ի N 1-2/80-Ն
ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

N 10-Ն

ՀՐԱՄԱՆ

Ղեկավարվելով «Ստանդարտացման մասին» Արցախի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, 9-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և 15-րդ հոդվածով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Արցախի Հանրապետությունում կիրառման մեջ դնել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբեր 19-ի թիվ 874-Ն հրամանով հաստատված՝ Հայաստանի Հանրապետության տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկատվության «Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչը»:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսական զարգացման նախարարության 2008 թվականի հուլիսի 3-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության տնտեսական գործունեության դասակարգիչը կիրառման մեջ դնելու մասին» N 1-2/80-Ն հրամանը:

3. Մույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Տ. Թորոսյանին:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«30» հոկտեմբերի 2019 թվական
ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

04 նոյեմբերի 2019թ.

N 207

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՐԴԱՏԱՐ-ՏԱՔՍԻ ԱՎՏՈՄՈԲԻԼՆԵՐՈՎ
ՆԵՐՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐՆԵՐ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 9-րդ, 37-րդ, 40-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության տեսակի լիցենզավորող հանձնաժողովի 2019 թվականի նոյեմբերի 4-ի N 343-ՏՆ եզրակացությունը՝

Հ Ր Ա Մ Ա Ց ՈՒ Մ Ե Մ՝

1.Տրամադրել՝

1) *անհատ ձեռնարկատեր Արմեն Մերյոժայի Հովսեփյանին* Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության իրականացման ՏՈՆ00127 լիցենզիայի N00004 ներդիր.

2) *ֆիզիկական անձ Հարութ Ալեքսանդրի Հայրապետյանին* Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության իրականացման ՏՈՆ00716 լիցենզիայի N00002 ներդիր.

3) *ֆիզիկական անձ Արտուշա Վաղարշակի Բեկյարյանին* Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության իրականացման ՏՈՆ00732 լիցենզիա և լիցենզիայի N00001 ներդիր:

2.Դադարեցնել՝

1) *անհատ ձեռնարկատեր Արմեն Մերյոժայի Հովսեփյանի* Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման ՏՈՆ00127 լիցենզիայի N00003 ներդիրի գործողությունը.

2) *անհատ ձեռնարկատեր Գագիկ Ազատի Սևիկյանի* Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման ՏՈՆ00692 լիցենզիայի և լիցենզիայի N00001 ներդիրի գործողությունները.

3) *ֆիզիկական անձ Հարութ Ալեքսանդրի Հայրապետյանի* Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման ՏՈՆ00716 լիցենզիայի N00001 ներդիրի գործողությունը:

3. Եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը գերատեսչական նորմատիվ ակտերը հրապարակող մարմինին:

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ,
ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ**

2019 թվականի հոկտեմբերի 28-ի

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ
2019-2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՊԼԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

N 337-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

Հիմք ընդունելով «Կրթության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Արցախի Հանրապետության երաժշտական և արվեստի դպրոցների 2019-2020 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը վերապահել Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարի տեղակալ Մ.Համբարձումյանին:

**ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՎ ՄՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ**

Ն. ԱՂԱԲԱԼՅԱՆ

**2019 թվականի հոկտեմբերի 28
ք. Ստեփանակերտ**

**ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՎ
ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ 2019-2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱԿ**

ԸՆԴՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

1. Արցախի Հանրապետության երաժշտական և արվեստի դպրոցներում (այսուհետ՝ դպրոց) ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ից: Ուսումնական տարվա տևողությունը սահմանվում է 34-40 շաբաթ:

2. Աշնանային, ձմեռային և գարնանային արձակուրդները սահմանվում են Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության կողմից՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների համար սահմանված ժամանակացույցին համապատասխան:

3. Ելնելով մասնագիտական առանձնահատկություններից և շենքային պայմաններից՝ կարող է սահմանվել վեցօրյա ուսումնական շաբաթ:

4. Ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման հիմնական ձևերն են՝ անհատական և խմբային պարապմունքները՝ դպրոցներում անհատական դասի տևողությունը՝ 45, խմբակայինը՝ 40 րոպե է:

5. Դպրոցում գործում է սովորողների գնահատման 10 միավորային համակարգ:

6. Ուսումնական տարին բաժանվում է կիսամյակների: Սովորողների ընթացիկ գնահատականների հիման վրա ձևավորվում է առաջին կիսամյակային, իսկ տարեվերջյան փոխադրական ստուգարքների ու քննությունների արդյունքով՝ երկրորդ կիսամյակային և տարեկան գնահատականները:

7. Յուրաքանչյուր օրինակելի ուսումնական պլանի «Աղյուսակը և պարզաբանումը» հատվածում ներկայացված է տվյալ մասնագիտության ուսուցման կազմակերպման գործընթացը:

Աղյուսակ 1

ԴԱՇՆԱՍՈՒՐ

(6-9 տարեկանը ներառյալ դպրոց ընդունվող երեխաների համար)

N	Առարկայի անվանում	Դասաժամերի քանակ (շաբաթական)							Ստուգարք	Քննություն
		Դասարաններ								
		I	II	III	IV	V	VI	VII		
1.	Դաշնամուր	2.0	2.0	2.0	2.0	2.0	2.0	2.0	I, II, III, V, VI	IV, VII
2.	Սոլֆեջիո	1.5	1.5	1.5	1.5	1.5	1.5	1.5	II, III, IV, V, VI	VII
3.	Երաժշտական գրականություն	---	---	---	1.5	1.5	1.5	1.5	V, VI, VII	---
4.	Երգչախումբ կամ համույթ	1.0	1.0	1.0	1.0	2.0	2.0	2.0	IV, V, VI, VII	---
5.	Ընտրովի	---	0.5	1.0	1.0	1.0	1.0	1.0	IV, VII	---
	ԸՆԴԱՄԵՆՆԵՐ	4.5	5.0	5.5	7.0	8.0	8.0	8.0		

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

1. Աղյուսակի 1-4-րդ կետերը ներառում են դասաժամերի այն նվազագույն քանակը, որը պարտադիր է VII դասարանի տարեվերջի ստուգարքներին և ավարտական քննություններին մասնակցելու համար: Դպրոցի ավարտական

վկայականը տրվում է VII դասարանի ստուգարքներն ու քննությունները հանձնած սովորողներին:

2.«Դաշնամուր» և «Ընտրովի» առարկաների ուսուցումը (դաս) կազմակերպվում է անհատական, իսկ «Սուֆեջիո», «Երաժշտական գրականություն» և «Երգչախումբ կամ համույթ» առարկաներինը՝ խմբային:

3.«Ընտրովի» առարկաներն են՝ թերթից ընթերցում, նվագակցություն, համույթ (անսամբլ), կոմպոզիցիա և այլն: Ընտրովի առարկայի դասաժամի 0,5 ժամը II-VII դասարաններում նպատակահարմար է տրամադրել թերթից ընթերցմանը, իսկ մյուս 0,5 ժամը՝ դասարաններում դաշնամուրի համույթին (անսամբլ), V-VII դասարաններում՝ նվագակցության ուսուցմանը:

4.Խմբային պարապմունքների 1 խմբում ներգրավված սովորողների թվաքանակը սահմանվում է 6-12: Առանձին դեպքերում՝ փոքր համակազմ ունեցող համայնքային դպրոցներում, այն կարող է բաղկացած լինել՝ սկսած 3 սովորողից:

5. Ուսումնական պլանի դասաժամերից բացի նախատեսվում է նաև՝

1)փորձաժամեր համադպրոցական միջոցառումների նախապատրաստման համար.

2)ամսական 2 դասաժամ համույթների, երգչախմբերի միացյալ պարապմունքների համար.

3)կոնցերտայտերական և իլյուստրատորական ժամեր՝ մեկ սովորողին կամ խմբին տրամադրվող ժամաքանակը սահմանելով շաբաթական 0,5 - 1,0 ժամ.

ա.«Ընտրովի» առարկայի ցանկից՝ դաշնամուրի համույթի (անսամբլ) նվագակցության համար,

բ.դաշնամուրի կոնցերտների կատարման համար,

գ.համույթների կամ երգչախմբերի խմբային և միացյալ պարապմունքների համար:

6.Երգչախմբի խմբավարի համար սահմանել մեկ միավոր՝ 20-30 սովորողի դեպքում: Ավելի մեծ երգչախմբի կազմի դեպքում համապատասխանաբար ավելացնել միավորների թիվը:

7.Երկրորդ գործիք, երգեցողություն ուսուցանելու դեպքում սահմանվում է լրացուցիչ ուսման վարձավճար:

8.Մինչև 6 տարեկան երեխաների համար դպրոցներում վճարովի հիմունքներով կարող են գործել նախապատրաստական դասարաններ: Առարկաների ընտրությունը կատարվում է ծնողի և երեխայի ցանկությամբ և (կամ) հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությամբ:

9.Ուսումնական ավարտած երեխաները կարող են վճարովի հիմունքներով ևս 1 կամ 2 ուսումնական տարի սովորել դպրոցում: Առարկաների ընտրությունը կատարվում է ծնողի և երեխայի ցանկությամբ և (կամ) հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությամբ:

Աղյուսակ 2

ԼԱՐԱՑԻՆ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐ

(Զուրթակ, ալտ, թավջութակ, կոնտրաբաս)

(6-9 տարեկանը ներառյալ դպրոց ընդունվող երեխաների համար)

N	Առարկայի անվանում	Դասաժամերի քանակ (շաբաթական)							Ստուգարք	Քննություն
		Դասարաններ								
		I	II	III	IV	V	VI	VII		
1.	Երաժշտական գործիք	2.0	2.0	2.0	2.0	2.0	2.0	2.0	I, II, III, V, VI	IV, VII

2.	Սուֆեջիո	1.5	1.5	1.5	1.5	1.5	1.5	1.5	1.5	II, III, IV, V, VI	VII
3.	Երաժշտական գրականություն	---	---	---	1.5	1.5	1.5	1.5	1.5	V, VI, VII	---
4.	Նվագախումբ, համույթ կամ երգչախումբ	1.0	1.0	1.0	1.0	2.0	2.0	2.0	2.0	IV, V, VI, VII	---
5.	Ընտրովի	---	0.5	1.0	1.0	1.0	1.0	1.0	1.0	IV, VII	---
	Ընդամենը	4.5	5.0	5.5	7.0	8.0	8.0	8.0	8.0		

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

1. Աղյուսակի 1-4-րդ կետերը ներառում են դասաժամերի այն նվագագույն քանակը, որը պարտադիր է VII դասարանի տարեվերջի ստուգաքննություններին և ավարտական քննություններին մասնակցելու համար: Դպրոցի ավարտական վկայականը տրվում է VII դասարանի ստուգաքննություններին հանձնած սովորողներին:

2. Այլի դասարանում ուսումը նպատակահարմար է սկսել V կամ VI դասարանից (մինչ այդ սովորողը ուսումնառում է ջութակի դասարանում): Կոնտրաբասի դասարանում ուսումը նպատակահարմար է սկսել V կամ VI դասարանից (մինչ այդ սովորողը ուսումնառում է թավջութակի դասարանում):

3. «Երաժշտական գործիք» և «Ընտրովի» առարկաների ուսուցումը (դաս) կազմակերպվում է անհատական, իսկ «Սուֆեջիո», «Երաժշտական գրականություն» և «Նվագախումբ, համույթ կամ երգչախումբ» առարկաներինը խմբային:

4. «Ընտրովի» առարկաներն են՝ դաշնամուր, թերթից ընթերցում, համույթ (անսամբլ), կոմպոզիցիա և այլն:

5. Խմբային պարապմունքների 1 խմբում ներգրավված սովորողների թվաքանակը սահմանվում է 6-12: Առանձին դեպքերում՝ փոքր համակազմ ունեցող համայնքային դպրոցներում, այն կարող է բաղկացած լինել սկսած 3 սովորողից:

6. Ուսումնական պլանի դասաժամերից բացի նախատեսվում է նաև

1) փորձաժամեր համադպրոցական միջոցառումների նախապատրաստման համար.

2) ամսական 2 դասաժամ համույթների, երգչախմբերի, նվագախմբի միացյալ պարապմունքների համար.

3) կոնցերտայտերական ժամեր՝ 1 սովորողին կամ խմբին տրամադրվող ժամաքանակը սահմանելով շաբաթական 0,5 – 1,0 ժամ՝

ա. «Երաժշտական գործիք» առարկայի համար,

բ. համույթների, նվագախմբերի կամ երգչախմբերի խմբային և միացյալ պարապմունքների համար:

7. Ելնելով համույթի, նվագախմբի կամ երգչախմբի պարապմունքների առանձնահատկություններից՝ սահմանել դեկավարի միավոր.

1) 10-12 սովորողի դեպքում՝ 1 միավոր (նվագախումբ, համույթ).

2) 20-30 սովորողի դեպքում՝ 1 միավոր (երգչախումբ):

Ավելի մեծ նվագախմբի կամ երգչախմբի դեպքում ավելացնել միավորների թիվը:

8. Երկրորդ գործիք, երգեցողություն ուսուցանելու դեպքում սահմանվում է լրացուցիչ ուսման վարձավճար:

9. Մինչև 6 տարեկան երեխաների համար դպրոցներում վճարովի հիմունքներով կարող են գործել նախապատրաստական դասարաններ: Առարկաների ընտրությունը կատարվում է ծնողի և երեխայի ցանկությամբ և (կամ) հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությամբ:

10. Ուսումնական ավարտած երեխաները կարող են վճարովի հիմունքներով ևս 1 կամ 2 ուսումնական տարի սովորել դպրոցում: Առարկաների ընտրությունը

կատարվում է ճնողի և երեխայի ցանկությանը և (կամ) հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությանը:

Աղյուսակ 3

ԵՐԳԵՑՈՂՈՒԹՅՈՒՆ

(Դասական, ժողովրդական, էտրադային)

(9 տարեկան և բարձր տարիքում դպրոց ընդունվող երեխաների համար)

N	Առարկայի անվանում	Դասաժամերի քանակ (շաբաթական)					Ստուգաքոչ	Քննություն
		Դասարաններ						
		I	II	III	IV	V		
1.	Մեներգեցողություն	2	2	2	2.0	2.0	I, II, IV	III, V
2.	Սոլֆեջիո	1.5	1.5	1.5	1.5	1.5	II, III, IV	V
3.	Երաժշտական գրականություն	---	1.5	1.5	1.5	1.5	III, IV, V	---
4.	Երգչախումբ կամ համույթ	---	1.0	2.0	2.0	2.0	III, IV, V	---
5.	Դաշնամուր	1.0	1.0	1.0	1.0	1.0	III, IV, V	---
	Ընդամենը	4.0	6.5	7.5	8	8		

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

1. Աղյուսակի 1-4-րդ կետերը ներառում են դասաժամերի այն նվազագույն քանակը, որը պարտադիր է V դասարանի տարեվերջի ստուգաքոչներին և ավարտական քննություններին մասնակցելու համար: Դպրոցի ավարտական վկայականը տրվում է V դասարանի ստուգաքոչները և քննությունները հանձնած սովորողներին:

2. «Մեներգեցողություն» և «Դաշնամուր» առարկաների ուսուցումը (դաս) կազմակերպվում է անհատական, իսկ «Սոլֆեջիո», «Երաժշտական գրականություն» և «Երգչախումբ կամ համույթ» առարկաներին՝ խմբային:

3. Խմբային պարապմունքների մեկ խմբում ներգրավված սովորողների թվաքանակը սահմանվում է 6-12: Առանձին դեպքերում՝ փոքր համակազմ ունեցող համայնքային դպրոցներում, այն կարող է բաղկացած լինել՝ սկսած 3 սովորողից:

4. Ուսումնական պլանի դասաժամերից բացի նախատեսվում է նաև՝

1) փորձաժամեր համադպրոցական միջոցառումների նախապատրաստման համար.

2) ամսական 2 դասաժամ համույթների, երգչախմբերի միացյալ պարապմունքների համար.

3) կոնցերտայատերական ժամեր՝ 1 սովորողին կամ խմբին տրամադրվող ժամաքանակը սահմանելով շաբաթական 0,5 – 1,0 ժամ՝

ա. «Մեներգեցողություն» առարկայի համար,

բ. երգչախմբերի կամ համույթների խմբային և միացյալ պարապմունքների համար:

5. Երգչախմբի խմբավարի համար սահմանել մեկ միավոր՝ 20-30 սովորողի դեպքում: Ավելի մեծ երգչախմբի կազմի դեպքում համապատասխանաբար ավելացնել միավորների թիվը:

6. Դպրոցներում «Մեներգեցողություն» առարկայի և խմբային պարապմունքների մեկ դասաժամը սահմանել 40 րոպե:

7. Երկրորդ գործիք ուսուցանելու դեպքում սահմանվում է լրացուցիչ ուսման վարձավճար:

8.Մինչև 9 տարեկան երեխաների համար դպրոցներում վճարովի հիմունքներով կարող են գործել նախապատրաստական դասարաններ: Առարկաների ընտրությունը կատարվում է ծնողի և երեխայի ցանկությամբ և (կամ) հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությամբ:

9.Ուսումնական տարի սկսվելուց հետո կարող են վճարովի հիմունքներով ևս 1 կամ 2 ուսումնական տարի սովորել դպրոցում: Առարկաների ընտրությունը կատարվում է ծնողի և երեխայի ցանկությամբ և (կամ) հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությամբ:

Աղյուսակ 4

ԵՐԳԵՑՈՂՈՒԹՅՈՒՆ
(Դասական, ժողովրդական, էստրադային)
(6-9 տարեկանը ներառյալ դպրոց ընդունվող երեխաների համար)

N	Առարկայի անվանում	Դասաժամերի քանակ (շաբաթական)							Ստուգաքր	Քննություն
		Դասարաններ								
		I	II	III	IV	V	VI	VII		
1.	Մեներգեցողություն	1.5	1.5	1.5	1.5	1.5	2.0	2.0	I, II, III, IV, V, VI	VII
2.	Սոլֆեջիո	1.5	1.5	1.5	1.5	1.5	1.5	1.5	II, III, IV, V, VI	VII
3.	Երաժշտական գրականություն	---	---	---	1.5	1.5	1.5	1.5	V, VI, VII	---
4.	Երգչախումբ կամ համույթ	---	1.0	1.0	1.0	2.0	2.0	2.0	IV, V, VI, VII	---
5.	Դաշնամուր	1.0	1.0	1.0	1.0	1.0	1.0	1.0	III, IV, V, VI, VII	---
	Ընդամենը	4.0	5.0	5.0	6.5	7.5	8.0	8.0		

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

1.Աղյուսակի 1-4-րդ կետերը ներառում են դասաժամերի այն նվազագույն քանակը, որը պարտադիր է VII դասարանի տարեվերջի ստուգաքրքներին և ավարտական քննություններին մասնակցելու համար: Դպրոցի ավարտական վկայականը տրվում է VII դասարանի ստուգաքրքներն ու քննությունները հանձնած սովորողներին:

2.«Մեներգեցողություն» և «Դաշնամուր» առարկաների ուսուցումը (դաս) կազմակերպվում է անհատական, իսկ «Սոլֆեջիո», «Երաժշտական գրականություն» և «Երգչախումբ կամ համույթ» առարկաներինը՝ խմբային:

3.Խմբային պարապմունքների մեկ խմբում ներգրավված սովորողների թվաքանակը սահմանվում է 6-12: Առանձին դեպքերում՝ փոքր համակազմ ունեցող համայնքային դպրոցներում, այն կարող է բաղկացած լինել՝ սկսած 3 սովորողից:

4.Ուսումնական պլանի դասաժամերից բացի նախատեսվում է նաև՝

1) փորձաժամեր համադպրոցական միջոցառումների նախապատրաստման համար.

2) ամսական 2 դասաժամ համույթների, երգչախմբերի միացյալ պարապմունքների համար.

3) կոնցերտայատերական ժամեր՝ 1 սովորողին կամ խմբին տրամադրվող ժամաքանակը սահմանելով շաբաթական 0,5 – 1,0 ժամ՝

ա.«Մեներգեցողություն» առարկայի համար,

բ.երգչախմբերի կամ համույթների խմբային և միացյալ պարապմունքների համար:

5.Երգչախմբի խմբավարի համար սահմանել մեկ միավոր՝ 20-30 սովորողի դեպքում: Ավելի մեծ երգչախմբի կազմի դեպքում համապատասխանաբար ավելացնել միավորների թիվը:

6.Դպրոցներում «Մեներգեցողություն» առարկայի և խմբային պարապմունքների մեկ դասաժամը սահմանել 40 րոպե:

7.Երկրորդ գործիք ուսուցանելու դեպքում սահմանվում է լրացուցիչ ուսման վարձավճար:

8.Մինչև 6 տարեկան երեխաների համար դպրոցներում վճարովի հիմունքներով կարող են գործել նախապատրաստական դասարաններ: Առարկաների ընտրությունը կատարվում է ծնողի և երեխայի ցանկությամբ և (կամ) հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությամբ:

9.Ուսումն ավարտած երեխաները կարող են վճարովի հիմունքներով ևս 1 կամ 2 ուսումնական տարի սովորել դպրոցում: Առարկաների ընտրությունը կատարվում է ծնողի և երեխայի ցանկությամբ և (կամ) հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությամբ:

Աղյուսակ 5

ՓՈՂԱՅԻՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐ, ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ, ԱԿՈՐԴԵՈՆ, ՏԱՎԻՂ, ԿԻԹԱՌ

(9 տարեկան և բարձր տարիքում դպրոց ընդունվող երեխաների համար)

N	Առարկայի անվանում	Դասաժամերի քանակ (շաբաթական)					Ստուգաբք	Քննություն
		Դասարաններ						
		I	II	III	IV	V		
1.	Երաժշտական գործիք	2.0	2.0	2.0	2.0	2.0	I, II, IV,	III, V
2.	Մուլֆեջիո	1.5	1.5	1.5	1.5	1.5	II, III, IV	V
3.	Երաժշտական գրականություն	---	1.5	1.5	1.5	1.5	III, IV, V	---
4.	Նվագախումբ, համույթ կամ երգչախումբ	1.0	1.0	2.0	2.0	2.0	III, IV, V	---
5.	Ընտրովի	---	1.0	1.0	1.0	1.0	III, V	---
	Ընդամենը	4.5	7.0	8.0	8.0	8.0		

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

1.Աղյուսակի 1-4-րդ կետերը ներառում են դասաժամերի այն նվազագույն քանակը, որը պարտադիր է V դասարանի տարեվերջի ստուգաբքներին և ավարտական քննություններին մասնակցելու համար: Դպրոցի ավարտական վկայականը տրվում է V դասարանի ստուգաբքներն ու քննությունները հանձնած սովորողներին:

2.«Երաժշտական գործիք» և «Ընտրովի» առարկաների ուսուցումը (դաս) կազմակերպվում է անհատական, իսկ «Մուլֆեջիո», «Երաժշտական գրականություն» և «Նվագախումբ, համույթ կամ երգչախումբ» առարկաներինը՝ խմբային:

3.«Ընտրովի» առարկաներն են՝ թերթից ընթերցում, համույթ (անսամբլ), կոմպոզիցիա և այլն:

4.Խմբային պարապմունքների 1 խմբում ներգրավված սովորողների թվաքանակը սահմանվում է 6-12: Առանձին դեպքերում՝ փոքր համակազմ ունեցող համայնքային դպրոցներում, այն կարող է բաղկացած լինել սկսած 3 սովորողից:

5.Ուսումնական պլանի դասաժամերից բացի նախատեսվում է նաև

1) փորձաժամեր համադպրոցական միջոցառումների նախապատրաստման համար.

2) ամսական 2 դասաժամ համույթների, երգչախմբերի, նվագախմբի միացյալ պարապմունքների համար.

3) կոնցերտմայստերական ժամեր՝ մեկ սովորողին կամ խմբին տրամադրվող ժամաքանակը սահմանելով շաբաթական 0,5 – 1,0 ժամ՝

ա.«Երաժշտական գործիք» առարկայի համար,

բ.համույթների, նվագախմբերի կամ երգչախմբերի խմբային և միացյալ պարապմունքների համար:

6.Ելնելով նվագախմբի կամ երգչախմբի պարապմունքների առանձնահատկություններից՝ սահմանել ղեկավարի միավոր.

1) 10-12 սովորողի դեպքում՝ 1 միավոր (նվագախումբ).

2) 20-30 սովորողի դեպքում՝ 1 միավոր (երգչախումբ):

Ավելի մեծ նվագախմբի կամ երգչախմբի դեպքում ավելացնել միավորների թիվը:

7.Երկրորդ գործիք կամ երգեցողություն ուսուցանելու դեպքում սահմանվում է լրացուցիչ ուսման վարձավճար:

8.Մինչև 9 տարեկան երեխաների համար դպրոցներում վճարովի հիմունքներով կարող են գործել նախապատրաստական դասարաններ: Առարկաների ընտրությունը կատարվում է ծնողի և երեխայի ցանկությամբ և(կամ) հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությամբ:

9.Ուսումն ավարտած երեխաները կարող են վճարովի հիմունքներով ևս 1 կամ 2 ուսումնական տարի սովորել դպրոցում: Առարկաների ընտրությունը կատարվում է ծնողի և երեխայի ցանկությամբ և (կամ) հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությամբ:

Աղյուսակ 6

ՓՈՂԱՅԻՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐ, ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ, ԱԿՈՐԴԵՈՆ, ՏԱՎԻՂ, ԿԻԹԱՈՒ

(9 տարեկան և բարձր տարիքում դպրոց ընդունվող երեխաների համար)

N	Առարկայի անվանում	Դասաժամերի քանակ (շաբաթական)							Ստուգարք	Քննություն
		Դասարաններ								
		I	II	III	IV	V	VI	VII		
1.	Երաժշտական գործիք	1.5	1.5	2.0	2.0	2.0	2.0	2.0	I, II, III, V, VI	IV, VII
2.	Սոլֆեջիո	1.5	1.5	1.5	1.5	1.5	1.5	1.5	II, III, IV, V, VI	VII
3.	Երաժշտական գրականություն	---	---	---	1.5	1.5	1.5	1.5	V, VI, VII	---
4.	Երգչախումբ կամ համույթ	1.0	1.0	1.0	1.0	2.0	2.0	2.0	IV, V, VI, VII	---
5.	Ընտրովի	---	0.5	1.0	1.0	1.0	1.0	1.0	IV, VII	---
	Ընդամենը	4.0	4.5	5.5	7.0	8.0	8.0	8.0		

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

1.Աղյուսակի 1-4-րդ կետերը ներառում են դասաժամերի այն նվագագույն քանակը, որը պարտադիր է VII դասարանի տարեվերջի ստուգարքներին և ավարտական քննություններին մասնակցելու համար: Դպրոցի ավարտական վկայականը տրվում է VII դասարանի ստուգարքներն ու քննությունները հանձնած սովորողներին:

2.«Երաժշտական գործիք» և «Ընտրովի» առարկաների ուսուցումը (դաս) կազմակերպվում է անհատական, իսկ «Սոլֆեջիո», «Երաժշտական գրականություն» և «Երգչախումբ կամ համույթ» առարկաներինը՝ խմբային:

3.«Ընտրովի» առարկաներն են՝ թերթից ընթերցում, համույթ (անսամբլ), կոմպոզիցիա և այլն:

4.Խմբային պարապմունքների մեկ խմբում ներգրավված սովորողների թվաքանակը սահմանվում է 6-12: Առանձին դեպքերում՝ փոքր համակազմ ունեցող համայնքային դպրոցներում, այն կարող է բաղկացած լինել՝ սկսած 3 սովորողից:

5. Ուսումնական պլանի դասաժամերից բացի նախատեսվում է նաև՝

1)փորձաժամեր համադպրոցական միջոցառումների նախապատրաստման համար.

2)ամսական 2 դասաժամ համույթների, երգչախմբերի, նվագախմբի միացյալ պարապմունքների համար.

3)կոնցերտմայստերական ժամեր՝ 1 սովորողին կամ խմբին տրամադրվող ժամաքանակը սահմանելով շաբաթական 0,5 – 1,0 ժամ՝

ա.«Երաժշտական գործիք» առարկայի համար,

բ. նվագախմբերի կամ երգչախմբերի խմբային և միացյալ պարապմունքների համար:

6.Ելնելով նվագախմբի կամ երգչախմբի պարապմունքների առանձնահատկություններից՝ սահմանել դեկավարի միավոր.

1) 10-12 սովորողի դեպքում՝ մեկ միավոր (նվագախումբ).

2) 20-30 սովորողի դեպքում՝ մեկ միավոր (երգչախումբ):

Ավելի մեծ նվագախմբի կամ երգչախմբի դեպքում ավելացնել միավորների թիվը:

7.Երկրորդ գործիք կամ երգեցողություն ուսուցանելու դեպքում սահմանվում է լրացուցիչ ուսման վարձավճար:

8.Մինչև 9 տարեկան երեխաների համար դպրոցներում վճարովի հիմունքներով կարող են գործել նախապատրաստական դասարաններ: Առարկաների ընտրությունը կատարվում է ծնողի և երեխայի ցանկությամբ և (կամ) հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությամբ:

9.Ուսումնական ավարտած երեխաները կարող են վճարովի հիմունքներով ևս 1 կամ 2 ուսումնական տարի սովորել դպրոցում: Առարկաների ընտրությունը կատարվում է ծնողի և երեխայի ցանկությամբ և (կամ) հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությամբ:

Աղյուսակ 7

ԿԵՐՊԱՐՎԵՍ

(10 տարեկան և բարձր տարիքում դպրոց ընդունվող երեխաների համար)

N	Առարկայի անվանում	Դասաժամերի քանակ (շաբաթական)				Ստուգաք	Քննություն
		Դասարաններ					
		I	II	III	IV		
1.	Գծանկար	3.0	3.0	4.0	4.0	II, III	IV
2.	Գունանկար	3.0	3.0	3.0	3.0	II, III	IV
3.	Կոմպոզիցիա (ստեղծագործական թեմատիկ նկարչություն) հաստոցային/կիրառական	2/1	2/1	2/1	2/1	II, III	IV
4.	Քանդակ կամ դեկորատիվ-կիրառական արվեստ	2.0	2.0	1.0	1.0	II, III	IV
5.	Արվեստի պատմություն	1.0	1.0	1.0	1.0	IV	---
6.	Ընտրովի	1.0	1.0	1.0	1.0	II, IV	---
	Ընդամենը	13.0	13.0	13.0	13.0		

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

1. Աղյուսակի 1-5-րդ կետերը ներառում են դասաժամերի այն նվազագույն քանակը, որը պարտադիր է IV դասարանի տարեվերջի ստուգաքննությունների և ավարտական քննություններին մասնակցելու համար: Դպրոցի ավարտական վկայականը տրվում է IV դասարանի ստուգաքննությունն ու քննությունները հանձնած սովորողներին:

2. Դպրոցի հայեցողությամբ «Կոմպոզիցիա» առարկայի ավարտական քննությունը կարող է կազմակերպվել հաստոցային կամ կիրառական ձևերից մեկով:

3. «Ընտրովի» առարկաներն են՝ հեռանկարչություն, անատոմիա, ճեպանկար բնորդից, գրաֆիկա, համակարգչային գրաֆիկա և այլն: Ընտրովի առարկայի դասաժամի 0,25-ը I-IV դասարաններում նպատակահարմար է տրամադրել «ճեպանկար բնորդից» առարկային:

4. Խմբային պարապմունքների մեկ խմբում ներգրավված սովորողների թվաքանակը սահմանվում է 6-12: Առանձին դեպքերում՝ փոքր համակազմ ունեցող համայնքային դպրոցներում, այն կարող է բաղկացած լինել մինչև 5 սովորողից:

5. Ուսումնական պլանի դասաժամերից բացի նախատեսվում է նաև՝

1) ժամեր համադպրոցական միջոցառումների նախապատրաստման համար.

2) ժամեր բնորդի վարձատրության համար՝ ոչ ավելի, քան յուրաքանչյուր առարկային տրամադրվող ժամաքանակի 30 տոկոսը.

3) մանկավարժական աշխատանքի լրացուցիչ 56 ժամ՝ պլեներային դասերն ըստ խմբերի անցկացնելու համար: Այդ դասաժամերը կարող են օգտագործվել ուսումնական տարվա տարբեր ժամանակահատվածներում:

6. Մինչև 10 տարեկան երեխաների համար դպրոցներում վճարովի հիմունքներով կարող են գործել նախապատրաստական դասարաններ: Առարկաների ընտրությունը կատարվում է ծնողի և երեխայի ցանկությամբ և (կամ) հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությամբ:

7. Ուսումնական ավարտած երեխաները կարող են վճարովի հիմունքներով ևս 1 կամ 2 ուսումնական տարի սովորել դպրոցում: Առարկաների ընտրությունը կատարվում է ծնողի և երեխայի ցանկությամբ և (կամ) հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությամբ:

Աղյուսակ 8

ԿԵՐՊԱՐՎԵՍ

(6-10 տարեկանը ներառյալ դպրոց ընդունվող երեխաների համար)

N	Առարկայի անվանում	Դասաժամերի քանակ (շաբաթական)							Ստուգաքննություն	Քննություն
		Դասարաններ								
		I	II	III	IV	V	VI	VII		
1.	Կերպարվեստի հիմունքներ և նկարչություն	2.0	2.0	2.0					III	
2.	Կիրառական արվեստ	2.0	2.0	2.0					III	
3.	Ծեփագործություն	2.0	2.0	2.0					III	
4.	Գծանկար	---	---	---	3,0	3,0	4,0	4,0	IV, V, VI	VII
5.	Գունանկար	---	---	---	3,0	3,0	3,0	3,0	IV, V, VI	VII
6.	Կոմպոզիցիա (ստեղծագործական թեմատիկ նկարչություն)	---	---	---	2/1	2/1	2/1	2/1	IV, V, VI	VII

	հաստոցային/կիրառական									
7.	Քանդակ կամ կիրառական արվեստ	---	---	---	2,0	2,0	1,0	1,0	IV, V, VI	VII
8.	Արվեստի պատմություն	---	---	---	1.0	1.0	1.0	1.0	V, VI, VII	---
9.	Ընտրովի	0.5	0.5	1.0	1.0	1.0	1.0	1.0	IV, VII	---
	Ընդամենը	6.5	6.5	7.0	13.0	13.0	13.0	13.0		

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

1. Աղյուսակի 4-8-րդ կետերը ներառում են դասաժամերի այն նվազագույն քանակը, որը պարտադիր է VII դասարանի տարեվերջի ստուգաքննություններին և ավարտական քննություններին մասնակցելու համար: Դպրոցի ավարտական վկայականը տրվում է VII դասարանի ստուգաքննություն ու քննությունները հանձնած սովորողներին:

2. Դպրոցի հայեցողությամբ «Կոմպոզիցիա» առարկայի ավարտական քննությունը կարող է կազմակերպվել հաստոցային կամ կիրառական ձևերից մեկով:

3. «Ընտրովի» առարկաներն են՝ հեռանկարչություն, անատոմիա, ճեպանկար բնորոշից, գրաֆիկա, համակարգչային գրաֆիկա և այլն: «Ընտրովի» առարկայի դասաժամի 0,25-ը դասարաններում նպատակահարմար է տրամադրել «Ճեպանկար բնորոշից» առարկային:

4. Խմբային պարապմունքների մեկ խմբում ներգրավված սովորողների թվաքանակը սահմանվում է 6-12: Առանձին դեպքերում՝ փոքր համակազմ ունեցող համայնքային դպրոցներում, այն կարող է բաղկացած լինել մինչև 5 սովորողից:

5. Ուսումնական պլանի դասաժամերից բացի նախատեսվում է նաև՝

1) ժամեր համադպրոցական միջոցառումների նախապատրաստման համար.

2) ժամեր բնորոշի վարձատրության համար՝ ոչ ավելի, քան յուրաքանչյուր առարկային տրամադրվող ժամաքանակի 30 տոկոսը.

3) մանկավարժական աշխատանքի լրացուցիչ 56 ժամ՝ պլեներային դասերն ըստ խմբերի անցկացնելու համար: Այդ դասաժամերը կարող են օգտագործվել ուսումնական տարվա տարբեր ժամանակահատվածներում:

6. Մինչև 6 տարեկան երեխաների համար դպրոցներում վճարովի հիմունքներով կարող են գործել նախապատրաստական դասարաններ: Առարկաների ընտրությունը կատարվում է ծնողի և երեխայի ցանկությամբ և (կամ) հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությամբ:

7. Ուսումնական ավարտած երեխաները կարող են վճարովի հիմունքներով ևս 1 կամ 2 ուսումնական տարի սովորել դպրոցում: Առարկաների ընտրությունը կատարվում է ծնողի և երեխայի ցանկությամբ և (կամ) հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությամբ:

Աղյուսակ 9

ԴԵԿՈՐԱՏԻՎ-ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏ

(10 տարեկան և բարձր տարիքում դպրոց ընդունվող երեխաների համար)

N	Առարկայի անվանում	Դասաժամերի քանակ (շաբաթական)				Ստուգաքնն	Քննություն
		Դասարաններ					
		I	II	III	IV		
1.	Գծանկար	1	2	2	2	II, III	IV
2.	Գորգագործություն	1	1	2	2	II, III	IV

3.	Մանրանկարչություն	2	2	1	1	II, III	IV
4.	Գորելեն	2	2	2	3	II, III	IV
5.	Շյուղագործություն	1	-	-	-		
6.	Կարպետագործություն	2	3	3	3	II, III	IV
7.	Արվեստի պատմություն	1	1	1	1	IV	-
8.	Ընտրովի առարկա	1	1	1	1	II, IV	-
Ընդամենը		11	12	12	13		

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

1. Աղյուսակի 1-7-րդ կետերը ներառում են դասաժամերի այն նվազագույն քանակը, որը պարտադիր է IV դասարանի տարեվերջի ստուգաբաժիններին և ավարտական քննություններին մասնակցելու համար: Դպրոցի ավարտական վկայականը տրվում է IV դասարանի ստուգաբաժինն ու քննությունները հանձնած սովորողներին:

2.«Ընտրովի» առարկաներն են՝ հեռանկարչություն, անատոմիա, ճեպանկար բնորդից, գրաֆիկա, համակարգչային գրաֆիկա և այլն: Այս ցանկը կարող է ընդլայնվել՝ ըստ անհրաժեշտության: Ընտրովի առարկայի դասաժամի 0,25-ը I-IV դասարաններում նպատակահարմար է տրամադրել «ճեպանկար բնորդից» առարկային:

3.Խմբակային պարապմունքների մեկ խմբում ներգրավված սովորողների թվաքանակը սահմանվում է 6-12: Առանձին դեպքերում այն կարող է բաղկացած լինել մինչև 5 սովորողից:

4.Ուսումնական պլանի դասաժամերից բացի նախատեսվում են ժամեր՝ համադպրոցական միջոցառումների նախապատրաստման համար:

5.Դպրոցներում կարող են գործել մինչև տասը տարեկան երեխաների համար նախապատրաստական դասարաններ, որոնց առարկաների ընտրությունը կատարվում է ծնողի և երեխայի ցանկությամբ և (կամ) հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությամբ՝ վճարովի հիմունքներով:

6.Առարկաների ընտրությունը կատարվում է շրջանավարտի ցանկությամբ և (կամ) հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությամբ՝ վճարովի հիմունքներով:

7.Ուսումնական ավարտած երեխաները կարող են վճարովի հիմունքներով ևս 1 կամ 2 ուսումնական տարի սովորել դպրոցում: Առարկաների ընտրությունը կատարվում է ծնողի և երեխայի ցանկությամբ և (կամ) հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությամբ:

Աղյուսակ 10

**ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՓԱՅՏԻ ՓՈՐՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ
(10 տարեկան և բարձր տարիքում դպրոց ընդունվող երեխաների համար)**

N	Առարկայի անվանում	Դասաժամերի քանակ (շաբաթական)				Ստուգաբաժին	Քննություն
		Դասարաններ					
		I	II	III	IV		
1.	Քանդակագործություն	4	4	5	5	II, III	IV
2.	Փայտի փորագրություն	3	3	4	5	II, III	IV
3.	Ծեփագործություն	1	1	1	-	II, III	IV

4.	Գծանկար	3	3	3	3	II, III	IV
5.	Անատոմիա	1	2	-	-	IV	-
6.	Ընտրովի առարկա	1	-	-	-	II, IV	-
Ընդամենը		13	13	13	13		

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

1. Աղյուսակի 1-5-րդ կետերը ներառում են դասաժամերի այն նվազագույն քանակը, որը պարտադիր է IV դասարանի տարեվերջի ստուգաթղթերին և ավարտական քննություններին մասնակցելու համար: Դպրոցի ավարտական վկայականը տրվում է IV դասարանի ստուգաթղթերն ու քննությունները հանձնած սովորողներին:

2. «Ընտրովի» առարկաներն են՝ հեռանկարչություն, անատոմիա, ճեպանկար բնորոշից, գրաֆիկա, համակարգչային գրաֆիկա և այլն: Այս ցանկը կարող է ընդլայնվել՝ ըստ անհրաժեշտության: Ընտրովի առարկայի դասաժամի 0.25-ը I-IV դասարաններում նպատակահարմար է տրամադրել «Ճեպանկար բնորոշից» առարկային:

3. Նստավայրի պարապմունքների մեկ խմբում ներգրավված սովորողների թվաքանակը սահմանվում է 6-12: Առանձին դեպքերում այն կարող է բաղկացած լինել մինչև 5 սովորողից:

4. Ուսումնական պլանի դասաժամերից բացի նախատեսվում են ժամեր՝ համադպրոցական միջոցառումների նախապատրաստման համար:

5. Դպրոցներում կարող են գործել մինչև տասը տարեկան երեխաների համար նախապատրաստական դասարաններ, որոնց առարկաների ընտրությունը կատարվում է ծնողի և երեխայի ցանկությամբ և (կամ) հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությամբ՝ վճարովի հիմունքներով:

6. Առարկաների ընտրությունը կատարվում է շրջանավարտի ցանկությամբ և (կամ) հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությամբ՝ վճարովի հիմունքներով:

7. Ուսումնական ավարտած երեխաները կարող են վճարովի հիմունքներով ևս 1 կամ 2 ուսումնական տարի սովորել դպրոցում: Առարկաների ընտրությունը կատարվում է ծնողի և երեխայի ցանկությամբ և (կամ) հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությամբ:

Աղյուսակ 11

ՊԱՐԱՐՎԵՍ

(9 տարեկան և բարձր տարիքում դպրոց ընդունվող երեխաների համար)

N	Առարկայի անվանում	Դասաժամերի քանակ (շաբաթական)					Ստուգաթր	Քննություն
		Դասարաններ						
		I	II	III	IV	V		
1.	Դասական պար	3.0	4.5	4.5	4.5	4.5	II, III, IV	V
2.	Հայկական պար	---	3.0	3.0	3.0	3.0	III, IV	V
3.	Ժամանակակից պարահանդեսային պար	---	---	1.5	1.5	1.5	III, IV	V
4.	Պատմակենցաղային պար	---	1.5	---	---	---	II	---
5.	Ժողովուրդներին բնորոշ բեմական պար	---	---	1.5	1.5	1.5	III, IV	V
6.	Ռիթմիկա և պար	1.0	1.0	---	---	---	II	---
7.	Մարմնամարզություն	1.0	---	---	---	---	---	---

	(պարտեր)							
8.	Երաժշտության գրագիտություն և ունկնդրում	1.0	0.5	0.5	0.5	0.5	V	---
9.	Արվեստի պատմություն	---	1.0	1.0	1.0	1.0	V	---
10.	Բեմական փորձառություն (պրակտիկա)	0.5	0.5	0.5	0.5	0.5	---	---
	Ընդամենը	6.5	12.0	12.5	12.5	12.5		

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

1. Աղյուսակի 1-10-րդ կետերը ներառում են դասաժամերի այն նվազագույն քանակը, որը պարտադիր է V դասարանի տարեվերջի ավարտական ստուգարքներին և քննություններին մասնակցելու համար: Դպրոցի ավարտական վկայականը տրվում է V դասարանի ստուգարքներն ու քննությունները հանձնած սովորողներին:

2. Բոլոր առարկաները նախատեսվում է ուսուցանել խմբային պարապմունքների եղանակով, բացառությամբ սույն ուսումնական պլանի աղյուսակ 11-ի 10-րդ կետի՝ «Բեմական փորձառություն» առարկայի, որն անհատական պարապմունք է և պլանավորված է յուրաքանչյուր սովորողի հաշվարկով: «Բեմական փորձառություն» առարկայի դասաժամերի ընդհանուր քանակի բաշխման իրավունքը տրվում է արվեստի կամ պարարվեստի դպրոցների տնօրինությանը:

3. «Դասական պար», «Հայկական պար», «Ժամանակակից պարահանդեսային պար», «Պատմակենցաղային պար», «Ժողովուրդներին բնորոշ բեմական պար» առարկաների պարապմունքների մեկ խմբում ներգրավված սովորողների թվաքանակը սահմանվում է 8-12, իսկ «Ռիթմիկա և պար», «Մարմնամարզություն (պարտեր)», «Երաժշտության գրագիտություն և ունկնդրում» և «Արվեստի պատմություն» առարկաների խմբերում՝ 10-16: Առանձին դեպքերում առարկաների ուսուցումը կարող է իրականացվել առանձնացված տղաների և աղջիկների խմբերով (տղաների խմբում թվաքանակը թույլատրելի է սկսած 4-ից):

4. Ուսումնական պլանի դասաժամերից բացի՝ անհրաժեշտ է մանկավարժական աշխատանքի ժամեր նախատեսել նախաեղային փորձերի և միջոցառումների նախապատրաստման համար:

5. Ուսումնական պլանի կատարման նպատակով անհրաժեշտ է նախատեսել նվազակցության ժամեր:

1) սույն ուսումնական պլանի աղյուսակ 11-ի 1-6-րդ կետերի առարկաների խմբային և «Բեմական փորձառություն» առարկայի անհատական պարապմունքների շաբաթական դասաժամերին հավասար:

2) նախաեղային միացյալ պարապմունքների համար:

6. Հնգամյա կրթության դեպքում՝ III, IV, V դասարաններում խմբի համալրման դեպքում «Հայկական պար» և «Ժամանակակից պարահանդեսային պար» առարկաների շաբաթական դասաժամերի գումարային քանակը՝ 4,5 ժամ, դպրոցի մանկավարժական խորհրդի թույլտվությամբ կարող է տրամադրվել այդ առարկաներից որևէ մեկի ուսուցմանը ըստ սովորողների նախասիրության (համապատասխանաբար մյուսը բացառելով ուսումնական պլանից):

7. Դպրոցի ֆինանսական հնարավորությունից ելնելով և հիմնադրի կողմից հաստատված ուսման վարձի լրավճարով կարող է պլանավորվել յուրաքանչյուր աշակերտին շաբաթական 0,5 - 1,5 ժամ «Ընտրովի» առարկա: «Ընտրովի» առարկաներն են՝ երաժշտական գործիք, մեներգեցողություն, ստեպ, դերասանի վարպետություն և այլն:

8. Մինչև 9 տարեկան երեխաների համար դպրոցներում վճարովի հիմունքներով կարող են գործել նախապատրաստական դասարաններ: Առարկաների ընտրությունը

կատարվում է ճնողի և երեխայի ցանկությամբ և (կամ) հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությամբ:

9. Ուսումնական տարի սկսելուց հետո կարող են վճարովի հիմունքներով ևս 1 կամ 2 ուսումնական տարի սովորել դպրոցում: Առարկաների ընտրությունը կատարվում է ճնողի և երեխայի ցանկությամբ և (կամ) հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությամբ:

Աղյուսակ 12

ՊԱՐԱՐՎԵՍ

(6-9 տարեկան ներառյալ դպրոց ընդունվող երեխաների համար)

N	Առարկայի անվանում	Դասաժամերի քանակ (շաբաթական)							Ստուգարք	Քննություն
		Դասարաններ								
		I	II	III	IV	V	VI	VII		
1.	Դասական պար	---	---	4.5	4.5	4.5	4.5	4.5	III, IV, V, VI	VII
2.	Հայկական պար	---	---	3.0	3.0	3.0	3.0	3.0	III, IV, V, VI	VII
3.	Ժամանակակից պարահանդեսային պար	---	---	---	---	1.5	1.5	1.5	V, VI	VII
4.	Պատմակենցաղային պար	---	---	1.5	1.5				III, IV	---
5.	Ժողովուրդներին բնորոշ բեմական պար	---	---	---	1.5	1.5	1.5	1.5	IV, V, VI	VII
6.	Ռիթմիկա և պար	4.0	4.0	---	---	---	---	---	II	---
7.	Մարմնամարզություն	1.0	1.0	---	---	---	---	---	II	---
8.	Երաժշտության գրագիտություն և ունկնդրում	1.0	1.0	1.0	0.5	0.5	0.5	0.5	VI	---
9.	Արվեստի պատմություն	---	---	---	1.0	1.0	1.0	1.0	V, VI, VII	---
10.	Բեմական փորձառություն (պրակտիկա)	---	0.5	0.5	0.5	0.5	0.5	0.5	---	---
	Ընդամենը	6.0	6.5	10.5	12.5	12.5	12.5	12.5		

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

1. Աղյուսակի 1-10-րդ կետերը ներառում են դասաժամերի այն նվազագույն քանակը, որը պարտադիր է VII դասարանի տարեվերջի ավարտական ստուգաքննություն և քննություններին մասնակցելու համար: Դպրոցի ավարտական վկայականը տրվում է VII դասարանի ստուգաքննություն և քննությունները հանձնած սովորողներին:

2. Բոլոր առարկաները նախատեսվում է ուսուցանել խմբային պարապմունքների եղանակով, բացառությամբ սույն ուսումնական պլանի աղյուսակ 12-ի 10-րդ կետի՝ «Բեմական փորձառություն» առարկայի, որն անհատական պարապմունք է և պլանավորված է յուրաքանչյուր սովորողի հաշվարկով: «Բեմական փորձառություն» առարկայի դասաժամերի ընդհանուր քանակի բաշխման իրավունքը տրվում է արվեստի կամ պարարվեստի դպրոցների տնօրինությանը:

3. «Դասական պար», «Հայկական պար», «Ժամանակակից պարահանդեսային պար», «Պատմակենցաղային պար», «Ժողովուրդներին բնորոշ բեմական պար» առարկաների պարապմունքների մեկ խմբում ներգրավված սովորողների թվաքանակը

սահմանվում է 8-12, իսկ «Ռիթմիկա և պար», «Մարմնամարզություն (պարտեր)», «Երաժշտության գրագիտություն և ունկնդրում» և «Արվեստի պատմություն» առարկաների խմբերում՝ 10-16: Առանձին դեպքերում առարկաների ուսուցումը կարող է իրականացվել առանձնացված՝ տղաների և աղջիկների խմբերով (տղաների խմբում թվաքանակը թույլատրելի է սկսած չորսից):

4.Ուսումնական պլանի դասաժամերից բացի՝ անհրաժեշտ է մանկավարժական աշխատանքի ժամեր նախատեսել նախաեղային փորձերի և միջոցառումների նախապատրաստման համար:

5.Ուսումնական պլանի կատարման նպատակով անհրաժեշտ է նախատեսել նվագակցության ժամեր:

1) սույն ուսումնական պլանի աղյուսակ 12-ի 1-6-րդ կետերի առարկաների խմբային և «Բեմական փորձառություն» առարկայի անհատական պարապմունքների շաբաթական դասաժամերին համահավասար:

2) նախաեղային միացյալ պարապմունքների համար:

6.Յոթամյա կրթության դեպքում՝ V, VI, VII դասարաններում խմբի համալրման դեպքում «Հայկական պար» և «Ժամանակակից պարահանդեսային պար» առարկաների շաբաթական դասաժամերի գումարային քանակը՝ 4,5 ժամ, դպրոցի մանկավարժական խորհրդի թույլտվությամբ կարող է տրամադրվել այդ առարկաներից որևէ մեկի ուսուցմանը՝ ըստ սովորողների նախասիրության (համապատասխանաբար մյուսը բացառելով ուսումնական պլանից):

7.Դպրոցի ֆինանսական հնարավորություններից ելնելով և հիմնադրի կողմից հաստատված ուսման վարձի լրավճարով կարող է պլանավորվել յուրաքանչյուր սովորողին շաբաթական 0,5-1,5 ժամ «Ընտրովի» առարկա: «Ընտրովի» առարկայի ցանկը՝ երաժշտական գործիք, մեներգեցողություն, ստեպ, դերասանի վարպետություն և այլն:

8.Մինչև 6 տարեկան երեխաների համար դպրոցներում վճարովի հիմունքներով կարող են գործել նախապատրաստական դասարաններ: Առարկաների ընտրությունը կատարվում է ծնողի և երեխայի ցանկությամբ և (կամ) հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությամբ:

9.Ուսումնական պլանում երեխաները կարող են վճարովի հիմունքներով ևս 1 կամ 2 ուսումնական տարի սովորել դպրոցում: Առարկաների ընտրությունը կատարվում է ծնողի և երեխայի ցանկությամբ և (կամ) հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությամբ:

Աղյուսակ 13

ԹԱՏԵՐԱՐՎԵՍ

(9 տարեկան և բարձր տարիքում դպրոց ընդունվող երեխաների համար)

N	Առարկայի անվանում	Դասաժամերի քանակ (շաբաթական)					Մտու-գարք	Քննու-թյուն
		Դասարաններ						
		I	II	III	IV	V		
1.	Դերասանի վարպետություն	2.0	2.0	2.0	3.0	3.0	II, III, IV	V
2.	Բեմական խոսք	1.0	1.0	1.0	0.5	0.5	II, III, IV	V
3.	Բեմական շարժում	---	1.0	1.0	1.0	1.0	---	---
4.	Արվեստի պատմություն	---	1.0	1.0	1.0	1.0	III, V	---
5.	Պար	---	1.0	1.0	1.0	1.0	III, V	---
6.	Ռիթմիկա	1.0	---	---	---	---	---	---
7.	Երաժշտական գրականություն և ունկնդրում	1.0	0.5	0.5	0.5	0.5	V	---
8.	Բեմական փորձառու-թյուն (պրակտիկա)	0.5	0.5	0.5	0.5	0.5	---	---

9.	Ընտրովի	1.0	1.0	1.0	1.0	1.0	III, V	---
	Ընդամենը	6.5	8.0	8.0	8.5	8.5		

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

1. Աղյուսակի 1-4-րդ կետերը ներառում են դասաժամերի այն նվազագույն քանակը, որը պարտադիր է V դասարանի տարեկերջի ավարտական ստուգաքննարկին և քննություններին մասնակցելու համար: Դպրոցի ավարտական վկայականը տրվում է V դասարանի ստուգաքննարկները և քննությունները հանձնած սովորողներին:

2. Բոլոր առարկաները նախատեսվում է ուսուցանել խմբային պարապմունքների եղանակով, բացառությամբ սույն ուսումնական պլանի աղյուսակ 13-ի 8-րդ կետի՝ «Բեմական փորձառություն» առարկայի, որն անհատական պարապմունք է և պլանավորված է յուրաքանչյուր սովորողի հաշվարկով: «Բեմական փորձառություն» առարկայի դասաժամերի ընդհանուր քանակի բաշխման իրավունքը տրվում է արվեստի դպրոցների տնօրինությանը:

3. «Ընտրովի» առարկաներն են՝ երաժշտական գործիք, երգեցողություն, գեղարվեստական խոսք, տիկնիկային թատրոն, պար և այլն:

4. Խմբային պարապմունքների խմբերի սովորողների թվաքանակը սահմանվում է 6-12 սովորող, «Բեմական խոսք» առարկայի համար՝ մինչև հինգ սովորող:

5. «Բեմական փորձառություն (պրակտիկա)» առարկայով նախատեսված մանկավարժական աշխատանքի ժամերը պլանավորվում են մեկ սովորողի համար շաբաթական 0,5 դասաժամի չափով: Դպրոցների տնօրինությանը տրվում է այդ դասաժամերի ընդհանուր քանակը բաշխելու իրավունքը:

6. Ուսումնական պլանի դասաժամերից բացի նախատեսվում է նաև՝

1) փորձաժամեր համադպրոցական միջոցառումների նախապատրաստման համար.

2) նվազակցողի հաստիք ընտրովի առարկաների (բացի դաշնամուր, ակորդեոն, տավիղ, կիթառ գործիքների) համար:

7. Մինչև 9 տարեկան երեխաների համար դպրոցներում վճարովի հիմունքներով կարող են գործել նախապատրաստական դասարաններ: Առարկաների ընտրությունը կատարվում է ծնողի և երեխայի ցանկությամբ և (կամ) հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությամբ:

8. Ուսումնական ավարտած երեխաները կարող են վճարովի հիմունքներով ևս 1 կամ 2 ուսումնական տարի սովորել դպրոցում: Առարկաների ընտրությունը կատարվում է ծնողի և երեխայի ցանկությամբ և (կամ) հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությամբ:

Աղյուսակ 14

ԹՄՏԵՐԱՐՎԵՍ

(6-9 տարեկանը ներառյալ դպրոց ընդունվող երեխաների համար)

N	Առարկայի անվանում	Դասաժամերի քանակ (շաբաթական)							Ստուգաք	Քննություն
		Դասարաններ								
		I	II	III	IV	V	VI	VII		
1.	Դերասանի վարպետություն	2.0	2.0	2.0	2.0	2.0	3.0	3.0	II, III, V, VI	IV, VII
2.	Բեմական խոսք	1.0	1.0	1.0	0.5	0.5	0.5	0.5	II, III, V, VI	IV, VII
3.	Բեմական շարժում	---	---	---	1.0	1.0	1.0	1.0	---	---
4.	Արվեստի	---	---	---	1.0	1.0	1.0	1.0	V, VII	---

	պատմություն									
5.	Պար	---	---	1.0	1.0	1.0	1.0	1.0	IV, VII	
6.	Ռիթմիկա	1.0	1.0	---	---	---	---	---	IV, VII	---
7.	Երաժշտության գրագիտություն և ունկնդրում	---	---	0.5	0.5	0.5	0.5	0.5	---	---
8.	Բեմական փորձառություն (պրակտիկա)	0.5	0.5	0.5	0.5	0.5	0.5	0.5	---	---
9.	Ընտրովի	0.5	1.0	1.0	1.0	1.0	1.0	1.0	IV, VII	
	Ընդամենը	5.0	5.5	6.0	7.5	7.5	8.5	8.5		

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

1. Աղյուսակի 1-4-րդ կետերը ներառում են դասաժամերի այն նվազագույն քանակը, որը պարտադիր է VII դասարանի տարեվերջի ավարտական ստուգաքննարկի և քննություններին մասնակցելու համար: Դպրոցի ավարտական վկայականը տրվում է VII դասարանի ստուգաքննարկի և քննությունները հանձնած սովորողներին:

2. Բոլոր առարկաները նախատեսվում է ուսուցանել խմբային պարապմունքների եղանակով, բացառությամբ սույն ուսումնական պլանի աղյուսակ 14-ի 8-րդ կետի՝ «Բեմական փորձառություն» առարկայի, որն անհատական պարապմունք է և պլանավորված է յուրաքանչյուր սովորողի հաշվարկով: «Բեմական փորձառություն» առարկայի դասաժամերի ընդհանուր քանակի բաշխման իրավունքը տրվում է արվեստի դպրոցների տնօրինությանը:

3. «Ընտրովի» առարկաներն են՝ երաժշտական գործիք, երգեցողություն, գեղարվեստական խոսք, տիկնիկային թատրոն, պար և այլն:

4. Խմբային պարապմունքների խմբերի սովորողների թվաքանակը սահմանվում է 6-12 սովորող, «Բեմական խոսք» առարկայի համար՝ մինչև 5 սովորող:

5. «Բեմական փորձառություն (պրակտիկա)» առարկայով նախատեսված մանկավարժական աշխատանքի ժամերը պլանավորվում են մեկ սովորողի համար շաբաթական 0,5 դասաժամի չափով: Դպրոցների տնօրինությանը տրվում է այդ դասաժամերի ընդհանուր քանակը բաշխելու իրավունքը:

6. Ուսումնական պլանի դասաժամերից բացի նախատեսվում է նաև՝

1) փորձաժամեր համադպրոցական միջոցառումների նախապատրաստման համար.

2) նվազակցողի հաստիք ընտրովի առարկաների (բացի դաշնամուր, ակորդեոն, տավիդ, կիթառ գործիքների) համար:

7. Մինչև 6 տարեկան երեխաների համար դպրոցներում վճարովի հիմունքներով կարող են գործել նախապատրաստական դասարաններ: Առարկաների ընտրությունը կատարվում է ծնողի և երեխայի ցանկությամբ և (կամ) հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությամբ:

8. Ուսումնական ավարտած երեխաները կարող են վճարովի հիմունքներով ևս 1 կամ 2 ուսումնական տարի սովորել դպրոցում: Առարկաների ընտրությունը կատարվում է ծնողի և երեխայի ցանկությամբ և (կամ) հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությամբ:

Լ.Ավթանդիլյանի պաշտպաններ Է. Բեգլարյանի և Ջ. Ներսիսյանի վճռաբեկ բողոքը,

ՊԱՐՁԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

2018թ. սեպտեմբերի 11-ի ԱՀ ոստիկանության քննչական վարչության Մարտակերտի շրջանի քննչական խմբի քննիչ, ոստիկանության ավագ լեյտենանտ Հ.Մահակյանի (այսուհետ, նաև՝ նախաքննության մարմին) կողմից, սույն թիվ 161055.18 քրեական գործը դեպքի առթիվ հարուցվել է ԼՂՀ քրեական օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով:

Նախաքննության մարմնի 2018թ. սեպտեմբերի 18-ի որոշմամբ Լուսինե Կիմի Ավթանդիլյանը սույն քրեական գործով ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ԼՂՀ քրեական օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննության մարմնի 2018թ. սեպտեմբերի 18-ի որոշմամբ Լուսինե Ավթանդիլյանի նկատմամբ խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

Նախաքննության մարմնի 2019թ. հունվարի 25-ի որոշմամբ Ռուբիկ Արշակի Բաղդասարյանը ճանաչվել է տուժող, իսկ նույն օրը կայացրած մեկ այլ որոշմամբ Ռիմա Իշխանի Բաղդասարյանը ճանաչվել է տուժողի իրավահաջորդ:

Նախաքննության մարմնի 2019թ. փետրվարի 06-ի որոշմամբ Լուսինե Ավթանդիլյանին՝ ԼՂՀ քրեական օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքը փոփոխվել և նրան կրկին մեղադրանք է առաջադրվել ԼՂՀ քրեական օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննության մարմնի՝ որպես մեղադրյալ ներգրավելու մասին 2019թ. փետրվարի 06-ի որոշմամբ Լուսինե Ավթանդիլյանին մեղադրանք է առաջադրվել ԼՂՀ քրեական օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասով:

2019թ. փետրվարի 19-ին քրեական գործը մուտք է գործել ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան /այսուհետ, նաև՝ Առաջին ատյանի դատարան/, ստացել ՇԻԴ/0007/01/19 հերթական համարը և նույն թվականի նույն օրն ընդունվել վարույթ:

Առաջին ատյանի դատարանի 2019թ. մարտի 06-ի որոշմամբ քրեական գործը նշանակվել է դատաքննության:

Առաջին ատյանի դատարանի 2019թ. մարտի 29-ի՝ դատական քննության արագացված կարգ կիրառելու արդյունքում կայացրած դատավճռով Լուսինե Կիմի Ավթանդիլյանը մեղավոր է ճանաչվել ԼՂՀ քրեական օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցավոր արարքը կատարելու մեջ և նրա նկատմամբ նշանակվել է պատիժ՝ ազատազրկում՝ 2 /երկու/ տարի ժամկետով:

Լուսինե Կիմի Ավթանդիլյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ չհեռանալու մասին ստորագրությունը, թողնվել է անփոփոխ՝ մինչև դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելը:

Գործով քաղաքացիական հայց և դատական ծախսեր չեն եղել:

Նշված դատավճռի դեմ 2019թ. ապրիլի 22-ին վերաքննիչ բողոք են ներկայացրել ամբաստանյալ Լ.Ավթանդիլյանի պաշտպաններ Է.Բեզլարյանը և Ջ.Ներսեսյանը:

Վերաքննիչ բողոքին 2019թ. մայիսի 06-ին գրավոր պատասխան է ներկայացրել տուժողի իրավահաջորդ Ռ.Բաղդասարյանը:

Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանի /այսուհետ՝ Վերաքննիչ դատարան/ 2019թ. մայիսի 07-ի որոշմամբ վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ և նշանակվել դատաքննության:

Վերաքննիչ դատարանի 2019թ. մայիսի 31-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժվել է՝ Առաջին աստիճանի դատարանի 2019թ. մարտի 19-ի դատավճիռը թողնելով օրինական ուժի մեջ:

Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ 2019թ. հունիսի 24-ին վճռաբեկ բողոք են ներկայացրել ամբաստանյալ Լուսինե Ավթանդիլյանի պաշտպաններ Է.Բեզլարյանը և Ջ.Ներսեսյանը:

2019թ. հուլիսի 25-ին տուժողի իրավահաջորդ Ռիմա Բաղդասարյանը ներկայացրել է վճռաբեկ բողոքի պատասխան:

2. Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

Ըստ մեղադրական եզրակացության՝ Լուսինե Ավթանդիլյանին ԼՂՀ քրեական օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2018թ. սեպտեմբերի 10-ին, ժամը 08:00-ի սահմաններում Մարտակերտ քաղաքի Մախարովի փողոցի թիվ 5 հասցեում տեղակայված շենքի առաջին հարկում գտնվող «Արշակ Բաղդասարյան» ԱԶ առևտրի սրահում, իր և նախկին ամուսնու կողմից ունեցած պարտքը չմարելու պատճառով վիճաբանության մեջ է մտել առևտրի սրահի տնօրեն Ռուբիկ Բաղդասարյանի հետ, որի ընթացքում վերջինիս կողմից իր ձախ ձեռքից բռնելու և պարտքը մարելու կապակցությամբ դիտողություններ անելուց հետո, խանութից դուրս գալու նպատակով Ռ.Բաղդասարյանի բռնվածքից ազատվելու համար, հատակից աջ ձեռքով վերցրել է ապակյա շիշ և շրջվելով դեպի նրան շոկ մեկ անգամ հարվածել է Ռ.Բաղդասարյանի գլխի քունքային հատվածին, հրել հետ, ինչի հետևանքով վերջինս ընկել է սալիկապատ հատակին և գլխի գագաթային հատվածում ստացած մարմնական վնասվածքներից մահացել:

3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը բերվել է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոքաբերները նշել են, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ԼՂՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի և 47-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները: Նշված պնդումը հիմնավորել են հետևյալ փաստարկներով.

Բողոքաբերները գտնում են, որ կարիք չկա իրենց պաշտպանյալին ազատությունից զրկել, քանի որ նա գիտակցում է իր կատարածը, հասկանում է, որ դա իր կողմից եղել է շատ սխալ արարք, անկեղծորեն զղջում է կատարածի համար, այսքան ժամանակ ոչ մի անօրինական քայլ չի արել, իրեն դրսևորել է լավ:

Բողոքաբերները նշում են, որ վստահ են, որ ամբաստանյալը լիովին գիտակցում է իր կատարածի հետևանքները, և եթե պատժի նպատակն է ուղղել հանցավորին, ապա վստահ են, որ ամբաստանյալի ուղղումը հնարավոր է առանց հասարակությունից մեկուսացնելու:

Բողոքաբերները գտնում են, որ պատիժը պայմանականորեն չկիրառելու իրավական հիմքերի բացահայտելու համար ԼՂՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածով սահմանված դրույթներով անհրաժեշտ է մեկնաբանել ԼՂՀ քրեական օրենսգրքի 47-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պատժի նպատակների համատեքստում, այն է՝ պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները:

Բողոք բերողները խնդրել են վճռաբեկ բողոքը ընդունել վարույթ, բեկանել ԱՀ վերաքննիչ դատարանի 2019թ. մայիսի 31-ի ԸԲԴ/0007/01/19 քրեական գործով կայացրած դատավճիռը, ամբաստանյալի նկատմամբ կիրառել ԼՂՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածը՝ պատիժը պայմանականորեն չկիրառելով՝ սահմանելով փորձաշրջան:

3.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Ըստ տուժողի իրավահաջորդ Ռ.Բաղդասարյանի սույն քրեական գործի հանգամանքները դատարաններին հիմք են տվել հանգել ճիշտ, օբյեկտիվ և արդարացի հետևության, այն է՝ որ Լուսինե Ավթանդիլյանի նկատմամբ պատժի նպատակներին հնարավոր է հասնել 2 տարի ժամկետով ազատազրկման ձևով պատիժը կրելու պայմաններում: Տուժողի իրավահաջորդը գտնում է որ Առաջին աստիճանի և Վերաքննիչ դատարանների դատական ակտերն օրինական են, հիմնավորված և պատճառաբանված, դրանք բեկանելու և փոփոխելու՝ ԼՂՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածը կիրառելու դատավարական հիմքերը բացակայում են, կխախտվի նաև տուժող կողմի իրավունքները և օրինական շահերը, ուստի խնդրում է վճռաբեկ բողոքը մերժել:

4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Սույն գործով Գերագույն դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքի պահպանման տեսանկյունից հիմնավորված և պատճառաբանված են արդյոք Լ.Ավթանդիլյանի նկատմամբ ազատազրկման ձևով պատիժ նշանակելու և այդ պատիժը նրա կողմից կրելու անհրաժեշտության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

ԼՂՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխան են հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար»:

ԼՂՀ քրեական օրենսգրքի 47-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները»:

ԼՂՀ քրեական օրենսգրքի 59-րդ հոդվածի համաձայն՝ «1. Հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթները:

2. Պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով:

3. Հանցագործության համար նախատեսված պատիժներից առավել խիստը նշանակվում է, եթե նվազ խիստ տեսակը չի կարող ապահովել պատժի նպատակները»:

ԼՂՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի համաձայն՝ «1. Եթե դատարանը կալանքի, ազատազրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:

2. Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները ...»:

Մեջբերված քրեաիրավական նորմերը Գերագույն դատարանի կողմից վերլուծության են ենթարկվել մի շարք գործերով կայացված որոշումներում, և մշտապես վերահաստատվել է դիրքորոշումն առ այն, որ դատարանի համոզվածությունը, վստահությունն այն մասին, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է առանց իրական պատիժ կրելու, պետք է հիմնվի գոյություն ունեցող այնպիսի օբյեկտիվ տվյալների համակողմանի վերլուծության վրա, որոնք բնութագրում են արարքը, հանցավորի անձը և վկայում պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերի առկայության մասին:

Չնայած, որ պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված ԼՂՀ քրեական օրենսգրքին ինչպես հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ սահմանափակում չի նախատեսում, սակայն դատարանի հետևությունները պետք է, ի թիվս այլոց, հիմնված լինեն հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի ամբողջական գնահատման վրա՝ հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են օրենքով պահպանվող հասարակական հարաբերության բնույթը, մեղքի ձևը և տեսակը, պատճառված վնասի չափը, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները, հանցագործության հանգամանքները, եղանակը, գործիքներն ու միջոցները և այլն:

ԼՂՀ քրեական օրենսգրքի 108-րդ՝ «Անզգուշությամբ մահ պատճառելը» վերտառությամբ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Անզգուշությամբ մահ պատճառելը՝ պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով»:

Վերը շարադրվածի լույսի ներքո Գերագույն դատարանն արձանագրում է, որ քննարկվող հանցագործության համար պատիժ նշանակելիս և այն կրելու նպատակահարմարության հարցը լուծելիս ստորադաս դատարանները պետք է իրենց ամբողջության մեջ վերլուծեն և համապարփակ գնահատման

ենթարկեն սույն հանցակազմի բնույթը, ինչպես նաև վերջինիս հանրային վտանգավորության աստիճանի վրա ազդող գործոնները:

Այսպիսով, ամփոփելով վերոշարադրյալը՝ Գերագույն դատարանն արձանագրում է, որ ԼՂՀ քրեական օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերով պատիժ նշանակելիս և այն կրելու նպատակահարմարության հարցը լուծելիս հանցավոր արարքի և հանցավորի անձի հանրային վտանգավորության աստիճանի վրա ազդող գործոնների համադրված վերլուծության և իրենց ամբողջության մեջ գնահատման հիման վրա է միայն հնարավոր ճիշտ պատկերացում կազմել հանցավորի անձնավորության և հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանի մասին, հետևաբար նաև նշանակել համաչափ պատիժ և լուծել պատիժը կրելու նպատակահարմարության հարցը:

Սույն գործի նյութերից երևում է, որ Լուսինե Ավթանդիլյանին ԼՂՀ քրեական օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2018թ. սեպտեմբերի 10-ին, ժամը 08:00-ի սահմաններում Մարտակերտ քաղաքի Մախարովի փողոցի թիվ 5 հասցեում տեղակայված շենքի առաջին հարկում գտնվող «Արշակ Բաղդասարյան» ԱԶ առևտրի սրահում, իր և նախկին ամուսնու կողմից ունեցած պարտքը չմարելու պատճառով վիճաբանության մեջ է մտել առևտրի սրահի տնօրեն Ռուբիկ Բաղդասարյանի հետ, որի ընթացքում վերջինիս կողմից իր ձախ ձեռքից բռնելու և պարտքը մարելու կապակցությամբ դիտողություններ անելուց հետո, խանութից դուրս գալու նպատակով Ռ.Բաղդասարյանի բռնվածքից ազատվելու համար, հատակից աջ ձեռքով վերցրել է ապակյա շիշ և շրջվելով դեպի նրան շշով մեկ անգամ հարվածել է Ռ.Բաղդասարյանի գլխի քունքային հատվածին, հրել հետ, ինչի հետևանքով վերջինս ընկել է սայլկապատ հատակին և գլխի գագաթային հատվածում ստացած մարմնական վնասվածքներից մահացել:

Առաջինատյանի դատարանը, ամբաստանյալ Լ.Ավթանդիլյանին մեղավոր ճանաչելով ԼՂՀ քրեական օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցավոր արարքի կատարման մեջ և նշանակելով ազատազրկման ձևով պատիժ՝ 2 տարի ժամկետով, փաստել է, որ պատժի տեսակը և չափը որոշելիս դատարանը հաշվի է առնում կատարված հանցագործության հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը, ամբաստանյալի անձը բնութագրող տվյալները, ինչպես նաև պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները ու եկել հետևության, որ ամբաստանյալ Լ.Ավթանդիլյանը ենթակա է քրեական պատասխանատվության և պատժի ու նրան պետք է ազատազրկման հետ կապված պատիժ նշանակել:

Վերաքննիչ դատարանը, ստուգելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտի օրինականությունը և հիմնավորվածությունը, այն թողել է անփոփոխ՝ արձանագրելով, որ չնայած դատավճիռ կայացնելիս Դատարանը, ի խախտումն դատավճիռ կայացնելիս դատարանի լուծման ենթակա հարցերը սահմանող ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի պահանջների, չի անրադարձել ամբաստանյալ Լ.Ավթանդիլյանի նկատմամբ նշանակված ազատազրկման ձևով պատիժը կրելու նպատակահարմարության հարցին, այլ կերպ չի քննարկել ԼՂՀ քրեական օրենսգրքի 69-րդ

հողվածի կիրառմամբ նրա նկատմամբ նշանակված ազատագրկման ձևով պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցը, այդուհանդերձ, Վերաքննիչ դատարանը, քննարկելով ամբաստանյալ Լ.Ավթանդիյանի նկատմամբ ԼՂՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքով ազատագրկման ձևապատիժը պայմանականորեն չկիրառելու հնարավորության հարցը և հիմք ընդունելով նրա պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները և անձը բնութագրող տվյալները, նրա պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը, գտել է, որ կատարված հանցագործության բնույթից և վտանգավորության աստիճանից ելնելով, այդ հանգամանքներից և տվյալներից որևէ մեկն առանձին, ինչպես նաև դրանց համակցությունը, բավարար հիմք չեն տալիս համոզվելու, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է առանց ազատագրկման ձևով նշանակված պատիժը կրելու ու իրավացիորեն գտել է, որ նշված բացթողումը, ըստ էության ճիշտ ելքով դատական ակտը բեկանելու հիմք չի կարող հանդիսանալ, արձանագրելով նաև, որ Դատարանի 2019թ. մարտի 29-ի դատավճռով Լ.Ավթանդիյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում կխախտվեն ինչպես ԼՂՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածով սահմանված արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքները, այնպես էլ նույն օրենսգրքի 47-րդ հոդվածով սահմանված սոցիալական արդարությունը վերականգնելու, պատժի ենթարկված անձին ուղղելու և հանցագործությունները կանխելու մասին պատժի նպատակները:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Գերագույն դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից հավասարապես հաշվի են առնվել նաև ամբաստանյալի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և նրա անձը բնութագրող հանգամանքները, ուստի գտնում է, որ ամբաստանյալի նկատմամբ պատիժ նշանակելիս, ինչպես նաև նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու նպատակահարմարության հարցը որոշելիս ստորադաս դատարանները, համադրված վերլուծության և իրենց ամբողջության մեջ պատշաճ գնահատման ենթարկելով սույն գործի փաստական տվյալները, ամբաստանյալին մեղսագրված արարքի բնույթը և հանրային վտանգավորության աստիճանը, նրա պատասխանատվությունը ու պատիժը մեղմացնող, ինչպես անձը բնութագրող հանգամանքները, եկել են հիմնավորված հետևության, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր չէ առանց պատիժ կրելու, այսինքն նրա նկատմամբ ազատագրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու միջոցով սույն գործով հնարավոր չէ հասնել ԼՂՀ քրեական օրենսգրքի 47-րդ հոդվածով նախատեսված պատժի նպատակներին: Այլ կերպ՝ ամբաստանյալ Լ.Ավթանդիյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու անթույլատրելիության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավոր են:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ Գերագույն դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը, ամբաստանյալ Լ.Ավթանդիյանի նկատմամբ չկիրառելով ԼՂՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածը, իսկ Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատական ակտը, նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտում թույլ չի տրվել ու կայացրել են գործն ըստ էության ճիշտ լուծող

դատական ակտեր: Ուստի պաշտպաններ Է.Բեգլարյանի և Ջ.Ներսիսյանի վճռաբեկ բողոքը պետք է մերժել, իսկ Վերաքննիչ դատարանի՝ 2019թ. մայիսի 31-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

Ելնելով շարադրված պատճառաբանություններից և ղեկավարվելով ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 436-րդ, 438-րդ և 440-րդ հոդվածներով, Գերագույն դատարանը

ՈՐՈՇԵՑ

1.ԸԻԴ/0007/01/19 քրեական գործով ԱՀ վերաքննիչ դատարանի 2019թ. մայիսի 31-ի որոշման դեմ ամբաստանյալ Լ.Ավթանդիլյանի պաշտպաններ Է. Բեգլարյանի և Ջ. Ներսիսյանի վճռաբեկ բողոքը մերժել: ԱՀ վերաքննիչ դատարանի 2019թ. մայիսի 31-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ՝
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝**

ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն

**Հ.ԽԱՉԱՏՐՅԱՆ
Կ.ՂԱՐՍՅԱՆ
Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Հ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Ի.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**